№ 175 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 11 ՕԳՈՍՏՈՍԻ

1910

ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 11 ՕԳՈՍՏՈՍԻ № 175

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրատան տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Ցայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Խմբագրատան տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction «MSCHAK».

ՕԳՈՍՏՈՍԻ 1-Ի Մինչեւ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 5 ՐՈՒԲԼԻ

12 ամսվ.՝ 10 ր., 6 և 7 ամսվ. 6 ր., ամսակ. 1 ր. Ամերիկա՝ տարեկան 6 դօլլար, Եւրօպա՝ 32 ֆր., Պարսկաստան՝ 10 ր., Թիւրքիա՝ 120 ղրուշ։ Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն, նոյնպէս և 40 կոպ. (կարելի է և նամակագրոշմով)։

Ցայտարարութիւնների համար վճարում են. 1 երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին 20 կոպ., վերջին երեսի վրա՝ 10 կոպ.։ Կովկասից դուրս յայտարարութիւնները ընդունվում են բացառապէս Торг. Домъ „Л. и Э. Метцль и К°“ ֆիրմայի միջոցով Մոսկվայում, Պետերբուրգում և Վարշավայում։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Օգոստոսի 7-ին, երկարատև և ծանր հիւանդութիւնից յետոյ վախճանվեց

ՓԱՇՕ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ ԵԴԻԳԱՐԵԱՆՑԸ,

որի մասին խորին վշտով յայտնում են ազգականներին, բարեկամներին և ծանօթներին հանգուցեալի կինը՝ Սօֆիա Պաւլօվնա, որդին՝ Սերգէյ Պաւլովիչ և հարսը՝ Ելիզավէտա Նիկիտինա ԵԴԻԳԱՐԵԱՆՆԵՐԸ։ Ամբիծքն այսօր, երեկոյեան ժամը 7-ին։ Մարմնի յուղարկաւորութիւնը հինգշաբթի, օգոստոսի 12-ին, առաւօտեան ժամը 10-ին, հանգուցեալի բնակարանից (Վելիկօկնեաժեսկայա փողոց, № 34) դէպի Թանդոյեան ս. Աստուածածնի եկեղեցին (Միխայլովսկի պր. վրա)։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։ 931. 2—1

Օգոստոսի 7-ին, երկարատև և ծանր հիւանդութիւնից յետոյ վախճանվեց

ՓԱՇՕ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ ԵԴԻԳԱՐԵԱՆՑԸ,

որի մասին խորին վշտով յայտնում են ազգականներին, բարեկամներին և ծանօթներին հանգուցեալի եղբայրները՝ Գէորգ և Ալէքսանդր Հայրապետեան ԵԴԻԳԱՐԵԱՆՑՆԵՐԸ իրանց ամուսիններով։ Ամբիծքն այսօր, երեկոյեան ժամը 7-ին։ Մարմնի յուղարկաւորութիւնը վաղը, հինգշաբթի, օգոստոսի 12-ին, առաւօտեան ժամը. 10-ին, հանգուցեալի բնակարանից (Վելիկօկնեաժեսկայա փող. № 34) դէպի Թանդոյեան ս. Աստուածածնի եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։ 932. 1—1

Երեւանի Հ. Հ. Թեմ. Դպրոց մտնել ցանկացողները

պէտք է օգոստոսի 15—30-ը իրանց խնդիրը՝ ծաղկի և ծննդեան վկայականների հետ՝ ներկայացնեն դպրոց։ Քննութեան ենթարկվողները պէտք է սեպտեմբերի 1-ին ներկայ լինեն։ IV դասարանում ընդունելութիւն չը կայ։

Տեսուչ դպրոցի՝ Առշակ Չիլինկարեան

(Հ.) (առ.) 900. 3—2

ՄԵՐՁԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔ

II

Մերձաւոր Արևելքի գործերին ամբողջ դար շարունակ հետամուտ են եղել Ռուսաստանը և Անգլիան, նրանց հետ միասին և Ֆրանսիան։

Առանց այդ պետութիւնների չէր կարող ոչ մի խոշոր և հիմնական փոփոխութիւն տեղի ունենալ օսմանեան պետութեան միջազգային գործերում։

Միւս պետութիւնները համակերպվում էին երեք պետութիւնների որոշումներին։

Բայց ահա մի քանի տասնեակ տարի է, որ եւրոպական մի ուրիշ պետութիւն, այն է Գերմանիան, ամեն կերպ աշխատում է ազդեցութիւն ձեռք բերել Մերձաւոր Արևելքում և փորձեր է անում իր շահերի անունից խօսելու և երբեմնապէս եռանդուն միջամտութիւններ անելու։

Եւ Գերմանիայի ջանքերը ի զուր չեն անցել։

Արդարև՝ Մերձաւոր Արևելքում նրա կատվում են գերմանական ազդեցութեան հաստատ նշանները։ Գերմանական դրամագլուխները գործում են զանազան ձեռնարկութիւնների՝ երկաթուղիական գծերի կառուցման և այլ գործերի մէջ, գերմանական ապրանքները մեծ քանակով մուտք են գործում այնտեղ, մշակվում են հանքագործական, գիւղատնտեսական, գործարանական նոր արդիւնագործութիւնների ծրագիրներ։

Գերմանիան առաջ է տանում իր նպատակները թէ միայնակ ինքնուրոյն և թէ Աւստրիայի հետ և Աւստրիայի միջոցով։ Փոքր Ասիայի մեծ ճանապարհներով անվերջ գնում են կարաւաններ, տանելով եւրոպական ապրանքներ։ Տրիեստի դրոշմներով։

Ֆրանսիական ազդեցութիւնը մի ժամանակ շատ մեծ էր Սիրիայի և Լիբանանի շրջանում։ Այն մեծ պաշտպանութիւնը, որ ցոյց տուեց Ֆրանսիան Լիբանանի քրիստոնեաներին, և այն մեծ քաղաքական ազդեցութիւնը, որ նա ձեռք էր բերել Արևելքում, շարունակում էին երկար տարիներ պահպանել այդ պետութեան համար վերին աստիճանի մի հեղինակաւոր դիրք, որի խախտման և նսեմացման հետամուտ էին միւս պետութիւնները։

Պարսկաստանում, անկասկած, անվիճելի էր երկու պետութիւնների բացառիկ ազդեցութիւնը, այն է՝ Ռուսաստանի և Անգլիայի։ Եւ ներկայումս այդ ազդեցութիւնն է պայմանաւորում ամեն մի խոշոր քաղաքական որոշում այդ թուլացած և կամազուրկ պետութեան մէջ։ Ֆրանսիան խուլ համաձայնութեամբ ընդունում է երկու պետութիւնների գրաւած դիրքերը և ազդեցութիւնը, իսկ Գերմանիան ամենևին մտադիր չէ լուռ հանդիսատես լինել այնտեղ կատարվող դէպքերին և այն կարծիքին է, որ նա այնտեղ ունի իր ասելիքը, որ նա ունի շահեր և խոշոր շահեր, թէ բոլորովին ինքնուրոյն և թէ կապված այն նորաստեղծ շահերի հետ, որ նա կարողացել է ձեռք բերել Միջագետքի և Բաղդադի ապագայ երկաթուղու շրջանում։

Եւ մենք տեսնում ենք, որ պարսկական քաղաքականութեան մէջ նկատվում է գերմանական ազդեցութիւնը, կարելի են դառնում գերմանական դրամագլուխների մուտքը, գերմանական բանկերի առաջարկութիւնները։

Եւրոպական մրցակցութիւնը օրէ-ցօր աւելի ու աւելի ուժեղ արտայայտութիւն է ստանում և իւրաքանչիւր պետութիւն հետամուտ է հաստատելու այնպիսի դիրք, որ նրան հնարաւորութիւն տայ ազատօրէն գործելու եթէ ոչ Մերձաւոր-Արևելքի ամբողջ տարածութեան, գոնէ կարելիին չափ ընդարձակ մի շրջանի վրա։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոնդոն, 9 օգոստոսի

Եապոնական դեսպանութիւնից դեռ ևս պաշտօնական տեղեկութիւն չէ ստացվել Կորէայի միացման մասին։ (Հ. Գ.)

Բերլին, 9 օգոստոսի

«Դէյտշէ-Կաբել-Գրամգեզելշաֆտին» հեռագրում են Տօկիոյից, որ Կորէան դառնում է եապոնական գաղութներից մէկը, իսկ Տերաուչին նշանակվում է այնտեղ որպէս գեներալ-նահանգապետ։ Կորէայի կայսերական տունը կունենայ եապոնական կայսերական տան հաւասար իրաւունքներ և յարգանքներ։ Կորէայի կայսրը առաջիկայ տարի կը փոխադրվի Տօկիո. Նրա ռոճիկը կը պահպանի իր առաջվայ չափը։ Կորէայի բարձրաստիճան անձնաւորութիւններին շնորհվում է եապոնական քաղաքապետի տիտղոս։ Կորէայում գոյութիւն ունեցող մաքսային տարիֆը 5 տարի շարունակ կը պահպանի իր ոյժը, որից յետոյ կենթարկվի փոփոխութեան։ (Հ. Գ.)

Բերլին, 9 օգոստոսի

«Դէյտշէ - Կաբել-Գրամգեզելշաֆտը» հեռագրով հաղորդում է Տօկիոյից, որ կայացել է Կորէայի միացումը։ (Հ.Գ.)

Ուէլլէս (Էդգաս նահ.), 9 օգոստոսի

Անառաջին հրդեհից աւերված է քաղաքի կէս մասը։ Հրդեհի տարածութիւնը հարիւր քառակուսի մղոնից անցնում է։ Կրակի մէջ այրվել են 24 հոգի։ Մինսոուլոյից եկել են հազարաչափ փախստականներ, մի մասը կիսաբերկ դրութեամբ։ Անհետ կորել են 180 անտառապահներ։ Երկիւղ են կրում, որ նրանք մի գուցէ նոյնպէս հրդեհի զոհ են գնացել։ (Հ. Գ.)

Մանագուա, 9 օգոստոսի

Էստրադան ջնջել է Թուրքիկներ, որով յայտարարում է ժողովրդին, որ պետական իշխանութիւնը անցնում է յեղափոխականների ձեռքը, որոնք կանգնած են քաղաքից 20 մղոն հեռաւորութեան վրա։ (Հ. Գ.)

Կիէվ, 9 օգոստոսի

Հարաւ-արևմտեան ճանապարհի վրա գտնվող Բիրզուլա կայարանի մօտ, նման խոտութեամբ չը տեսնված՝ աղաւնու ձուի մեծութեամբ կարկուտ է տեղացել, որը մերկացրել է ծառերը և ոչնչացրել ցանքսերը։ Օդեսայից Կիէվ գնացող մարդատար գնացքը ստիպված էր կանգնել։ Փշրվել են մի քանի վագոնների ապակիներ։ Կովել կայարանի մօտ աւազակները յարձակվել են երեք սայլերով գնացող առևտրական ճանապարհորդների վրա, սպանել են մէկին, վիրաւորել մի ուրիշին ու կողոպտել մօտ 8,000 ռուբլի։ (Հ. Գ.)

Բաղդատ, 9 օգոստոսի

Բաղդատի նահանգում 177 գիւղերի ցանքսերը ոչնչացրել են առնէտները։ Համաճարակը թուլանում է։ (Հ. Գ.)

Եկատերինոդար, 9 օգոստոսի

Զինուորական դատարանը սկսել է քննել 68 անարխիստ-կոմունիստների գործը, որոնք մեղադրվում են 1906 և 1907 թուականներին Կուբանի շրջանում կողոպուտներ, սպանութիւններ և բռնութիւններ կատարելու մէջ։

Նրանց թւի մէջ է գտնվում հասարակական գործիչ՝ բժիշկ Մէրերովիչը, որը մեղադրվում է լուր չը տալու և թաղցնելու մէջ։ (Հ. Գ.)

Խարկով, 9 օգոստոսի

Հանդիսաւոր կերպով բացվեց Կայսերական Ընկերութեան թռչնաբուծական բաժինը։ (Հ. Գ.)

Բերլին, 9 օգոստոսի

Վերջնականապէս հաստատված է, որ 1909 թւին սովորական եկամուտները աւելացան 72,500,000 մարկով, իսկ ծախքերը պակասեցին 40.500,000 մարկով։ Այդպիսով նախահաշիվ նախատեսված 239 միլիոն դէֆիցիտը, որ պէտք է ծածկվէր փոխառութեամբ, իսկապէս կազմում է 126 միլիոն։ (Հ. Գ.)

Օրեօլ, 9 օգոստոսի

Տաժանակիրների բանտի արհեստանոցում ապստամբեցին կալանաւորները, կացնով սպանեցին վերակացուին, վերջինիցս խլված տարանցիկ ատրճանակների վրա և, գործիքներով զինվելով, յարձակում գործեցին։ Պահակների համազարկով բանտարկեալներից չորսը սպանվել են, վեցը՝ վիրաւորվել։ (Հ. Գ.)

Ստացված լուրերի համաձայն՝ ռուսական զինուորական մինիստրութիւնը պատուիրել է գերմանական «Պարսեվալ» ֆիրմային կառուցանել երկու նոր օդաթռիչ նաւեր։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

XVIII ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՕՆԳՐԷՍ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ *)

VII

Սաղկհօլմ, 5 օգոստոսի

4) Կրետական հարցը.—Կրետական հարցը, իբրև այժմէական մի հարց, որ վտանգ է սպառնում խաղաղութեան և կարող է արիւնահեղ պատերազմ առաջ բերել ազգերի մէջ, չէր կարող վրիպել կօնգրէսի ուշադրութիւնից և նրա լուրջ քննութեան առարկայ չը դառնալ։ Ցանձնաժողովը, որի քննութեանն էր յանձնված այդ հարցը, Ֆրանսիական պարլամենտի նախկին անդամ Լիւսիէն Լը-Ֆոյէին տեղեկաբեր կարգելով՝ նրա բերանով յայտնեց կօնգրէսին հետևեալը. «Մնչիրը շատ փափուկ է. մի կողմում կայ վերածնվող Թիւրքիան, որ պահանջում է ունենալ որոշ վեհապետական իրաւունքներ, որ չէ կամենում այլևս իր պետութիւնը ենթարկել անդամահատութեան. մի այլ կողմում կայ Յունաստանը, որ կապված է կուլտուրական, բարոյական, պատմական և կրօնական սերտ կապերով Կրետէի հետ. երրորդ կողմում՝ ինքը Կրետէն, որ ձգտում է միանալ իր մայր-հայրենիքի հետ, և, վերջապէս, չորս մեծ պետութիւնները, որոնք հովանաւորողի դեր են ստանձնել Կրետէի վերաբերմամբ։ Արդ, ինչպէս հաշտեցնել այս բազմազան շահերը, ինչպէս հաղթել այդ անագին դժուարութիւնները։ Խաղաղութեան կօնգրէսները միշտ այն սկզբունքն են դառնել և քարոզել, թէ այն ժողովուրդը, որ իրան ազգութիւն է ճանաչում, ունի անխախտելի իրաւունք ազատուէն տրամադրել իր վիճակը. արդ, այդպիսի մի ժողովուրդ է կազմում և Կրետական ժողովուրդը։ Ուստի այն վէճը, որ ծագել է Թիւրքիայի և Կրետէի միջև, պէտք է լուծվի կամ երկու կողմերի փոխադարձ բանակցութեամբ և համաձայնութեամբ, կամ միջազգային արդարադատութեան միջոցով, միջազգային միջնորդ դատարանով. այդ պատճառով և յանձնաժողովը առաջարկում է կօնգրէսին հետևեալ որոշումը ընդունել։

«Կօնգրէսը, յարգանք մատուցանելով հանդերձ Կրետէի գործերին ուղղակի խառնված ժողովուրդների իմաստութեան, ինչպէս և հովանաւորող մեծ պետութիւնների օգտակար միջամտութեան, որոնք ապահովել են խաղաղութեան պահպանութիւնը.

«Ցիշեցնում է սակայն, որ միջազգային դժուարութիւնների տեսակն և գոհացուցիչ լուծումը կարող է ձեռք բերվել միայն իրաւունքի սկզբունքների գործադրութեամբ, այսինքն ճանաչելով ժողովուրդների իրաւունքը՝ տրամադրել ազատօրէն իրանց վիճակը և գործադրելով միջազգային արդարադատութեան միջամտութիւնը՝ ազգութեան վէճերի մէջ.

«Համարում է, որ Կրետէի գործերին ուղղակի խառնված ժողովուրդների արդարութեան ոգին, բարի կամքը և համաձայնութեան ցանկութիւնը, ինչպէս և իրանց իսկական շահերի գիտակցութեան զգացումը կարող կը լինեն մղել նրանց կարգադրել իրանց վէճը ամենի համար պատուաւոր և գոհացուցիչ ձևով, կամ փոխադարձ համաձայնութեան միջոցով կամ Հաագայի Ցաւյուն ատեանի միջոցով»։

5) Մարոկկոյի հարցը.—Այս հարցի առիթով կօնգրէսը կայացրեց հետևեալ որոշումը.

«Կօնգրէսը շնորհաւորում է, որ Ֆրանսիայի և Սպանիայի՝ Մարոկկոյում ունեցած զինուորական գործակալութիւնները վերջ գտան։

«Ցիշեցնում է, որ Ալժէզիրասի կօնֆերէնցիան բաւականացել էր միայն որոշելու ոստիկանութեան ոյժերի կազմակերպութիւնը, և ոյս ունի, որ կանոնաւոր և խաղաղասէր յարաբերութիւնների զարգացումը եւրոպացիների և մարոկկեան ազգաբնակութեան միջև թոյլ կը տայ զինուորական ոյժերի յաջորդական և արագ յետ կոչումը»։

6) Եգիպտական հարցը.—Այս հարցը չը կար կօնգրէսի օրակարգի մէջ, բայց եգիպտացի ազգային գործիչ Ֆահրիդ բէյ ներկայացրեց մի զեկուցագիր և խնդրեց, որ եգիպտական հարցը, իբրև միջազգային մի հարց, որ կապ ունի խաղաղութեան հետ, մտցվի կօնգրէսի օրակարգի մէջ և քննվի։ Իր զեկուցագրի մէջ, որ Ֆահրիդ բէյ ներկայացրեց յանուն եգիպտական ազգային կուսակցութեան, նա պահանջում է, որ Եգիպտոսը ազատվի անգլիական խնամակալութիւնից և դարձվի մի չէզոք պետութիւն, մեծ պետութիւնների հովանաւորութեան ներքոյ։ «Եգիպտոսը,—ասում է նա,—ներկայացնում է մի երկիր, որ ունի այժմ մօտ 14 միլիոն ազգաբնակութիւն. նա ունի առատին ինտելիգենցիա. նա այնքան զարգացել է, որ ընդունակ է ինքն իրան կառավարելու և դառնալու մի սահմանադրական երկիր, ունենալու սեփական պարլամենտ և պատասխանատու մինիստրութիւն։ Տարեկան 600 երիտասարդներ ուսանում են միայն Եւրոպայի զանազան հանրակրթարաններում. մենք ունենք զարգացած գրականութիւն, մամուլ. անգլիական խնամակալութիւնը մեզ մոտ շատ թանգ է նստում, ուստի և մեր ցանկութիւնն է, որ մեզ ազատութիւն տրվի։ Գալով Սուէզի ջրանցքին, նա կը հրատարակվի չէզոք բոլոր պետութիւնների համար»։

Սակայն Ֆահրիդ բէյի այս առաջարկը ընդդիմադրութեան հանդիպեց կօնգրէսի շատ անդամների և, գլխաւորապէս, գերմանացիների կողմից (անգլիացիները ձեռնպահ մնացին)։ Գերմանական պատգամաւորներ՝ Քուիդ և Ումֆրիդ այն կարծիքը յայտնեցին, թէ Եգիպտոսի անկախութեան հարց յարուցանելը՝ նշանակում է օսմանեան պետութեան անդամահատութեան հարց յարուցանել, որովհետև Եգիպտոսը իսկապէս օսմանեան է, բայց որոշ ինքնավարական հանգամանքներով։ Եթէ եգիպտական ժողովրդին տրվի լիակատար աւտոնոմիա այն նկատումով, թէ նա մի առանձին ազգութիւն է, ունեցող կուլտուրայի բոլոր պայմանները, ունեցող սեփական երկիր, լեզու, գրականութիւն, պատմութիւն, այն ժամանակ օսմանեան պետութեան բոլոր միւս ազգութիւններն ևս, որոնք ունեն նոյնպիսի յատկութիւններ, ինչպէս մակեդոնացիները, հայերը, հրէաները, կը պահանջեն նոյնպէս աւտոնոմիա, և դա կը լինի կատարեալ քայքայումն օսմանեան պետութեան։

Այս առարկութիւններն այն հետևանքն ունեցան, որ կօնգրէսը տրամադրվեց չը զբաղվել եգիպտական հարցով և խնդիրը դրվեց ձևական հողի վրա, այն է, որ, համաձայն կօնգրէսների կանոնադրութեան, օրակարգի խնդիրները որոշում է Բերնի միջազգային բիւրօն և ամեն մի խնդիր կանխապէս քննվում է ձեռնհաս յանձնաժողովի կողմից։ Ուստի կօնգրէսը որոշեց.

«Կօնգրէսը, յայտնելով որ ամեն մի ազգութեան ձգտումը՝ ազատութիւն և ինքնավարութիւն ձեռք բերելու՝ արժանի է համակրութեան, լսելով Ֆահրիդ բէյի զեկուցագիրը, որոշեց յանձնել խնդիրը Բերնի միջազգային բիւրօյի հայեցողութեան»։

Ուրեմն Բերնի բիւրօյից կախված կը լինի՝ մտցնել եգիպտական հարցը յաջորդ կօնգրէսի օրակարգի մէջ թէ չը մտցնել։

«Ցամենայն դէպս, պրոպագանդայի տեսակէտից, այդքանով էլ գոհ եմ»—բացագանչեց Ֆահրիդ բէյը։

7) Լեհական եւ հրէական հարցերը.—Պէտք է ասեմ, որ վիճաբանութիւնների ժամանակ բողոք յայտնեցին և լեհ ու հրէայ պատգամաւորները։ Նախորդ նիստում կօնգրէսը որոշել էր ջնջել մի բէզօլիւցիայի մէջ, որ ներկայացրել էին մի քանի պատգամաւորներ լեհերի և հրէաների մասին, «լեհ» ու «հրէայ» բառերը, ասելով որ լեհերը և հրէաները առանձին երկիրներ չեն կազմում։ Այդ հիման վրա լեհ պատգամաւորները և առարկում էին, որ եթէ «եգիպտական ազգի մասին կարելի է որոշումն կայացնել, ինչու չէ կարելի որոշումն կայացնել և լեհական, հրէական ազգերի մասին։ Բերնի բիւրօն յայտնեց, որ ինքն ստացել է մի որոշ բէզօլիւցիա, խնդրանօք ներկայացնողների կողմից՝ ենթարկել կօնգրէսի քննութեան՝ և վերաբերեալ Կրետէի, Մարոկկոյի, Ֆինլանդիայի, Ռուսաստանի, Եապոնիայի գործերին, այն բովանդակութեամբ Ռուսաստանի վերաբերեալ։

«XVIII կօնգրէսը, ստանալով բողոքներ, ձևակերպված յանուն Ռուսաստանի լեհերի, հրէաների և այլ հաւաքականութիւնների (colléctivités) այն վատ վարվեցողութիւնների մասին, որոնց ենթակայ են փոքրամասնութիւնները այն պետութիւնների մէջ,

«Ցեպպելին IV» տեսակի, որոնք պիտի պատրաստ լինեն 1911 թուի հոկտեմբերին։ («Բ. Ս.»)

—

Մոսկվա, 7 օգոստոսի

Լիբեանդայի հրապարակում ձերբակալել են գեներալի հագուստով մի աղքատի. նա իրան կոչում էր մարկիզ Դելեար։ («Ճ.»)

—

Ռիգա, 9 օգոստոսի

6 գիւղերում հրդեհը ոչնչացրել է 75 գիւղական տներ իրանց մանուաւոր շինուածքներով։ Այրվել են հացահատիկների մթերանոցները, շարժական կայքը և շատ անասուններ։ (Հ. Գ.)

Ալէքսանդրովսկ-Գրուշեվսկ, 9 օգոստոսի

Անտրացիտի հանքերում աշխատող բանուորներից մէկը կապել է փորին մի քանի դինամիտի փամփուշտներ և պայթեցրել իրան։ Պատճառը ընտանեկան կեանքի դժբաղդութիւնն է։ (Հ. Գ.)

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Պարիզ, 9 օգոստոսի

Հաւասի հեռագր. գործակ. ստացած տեղեկութիւնների համաձայն, Ատտիկի բոլոր ընտրողական շրջաններում և գաւառական ուրիշ շատ տեղերում ժողովրդական միութիւնների ցուցակները դերակշռում են Տէօտօքիսի և Բալլիսի միացեալ կուսակցութիւններին։ Վէնիզէլօսը կընտրվի Ատտիկում ճնշող մեծամասնութեամբ։ Կընտրվեն նաև կրետական միւս բոլոր թեկնածուները։ Բալլիսը յայտնել է, որ այդ պլեբիսցիտի հաշուով Վէնիզէլօսին պէտք է յանձնվի մինիստրական կաբինէտի կազմումը, կրետական պաշտօնները թողնելուց յետոյ։ Մամուլը այն կարծիքին է, որ ընտրութիւնները այն արդիւնքը կը տան, որ բէվիզիոնիստական ազգային ժողովը կը վերածեն հիմնադիր ժողովի։ Դրագումիսին մինիստր-նախագահ ընտրելը և Կալէրիսին արտաքին գործերի մինիստր՝ արդէն ապահովված է։ Տէօտօքիսի ցուցակը կը յաղթանակի Կորֆույում։ (Հ. Գ.)

—

Աթէնք, 9 օգոստոսի

Լրագրական լուրերի համաձայն թիւրքական զինուորները յարձակվել են Ա-ֆօնում գտնվող յունական Վատօպէդի սենեասանի վրա, ծեծել են երկու կուսակրօնների և տարել նրանց Սալոնիկ։ Ա-ֆօնում գտնվող կուսակրօնները խիստ զրգռված են։ (Հ. Գ.)

—

Բուխարեստ, 9 օգոստոսի

Այստեղ է ժամանել թիւրքական ժող. լուս. մինիստրը մի խումբ պրոֆեսօրների և կ. Պոլսի համալսարանի ուսանողների հետ։ Քաղաքը զարդարված է դրօշակներով։ (Հ. Գ.)

ՊԱՐՕԿԱՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Թէհրան, 9 օգոստոսի

Էնզելի - Թէհրանեան ճանապարհի վրա կատարված առաջին երկու թալանումները անպատիժ թողնելու շնորհիւ, անցեալ գիշեր Ղազվինից ութ վերստ հեռու երրորդ յանդուգն յարձակումն է կատարվել։ Երկրորդ անգամ կողոպտված է պարսկական պօստատունը։ Մօլերայի երևան գալը Էնզելիում մեծ անհանգստութիւն է պատճառում Թէհրանին։ (Հ. Գ.)

—

«Рус. Слово»-ի Թէհրանի թղթակիցը նոյն թերթին հաղորդում է, որ իւրաքանչիւր օր շահի պալատից հեռախօսով տեղեկութիւններ են հարցնում Սաթթար խանի առողջութեան մասին։ Կուի յաջորդ օրը վիրաւորվածին այցելել են Սարդար Ասադը և Եփրեմը։ Վերջինիս հետ Սաթթար խանը հանդիստ զրուցում էր։

—

„Баку“ լրագրի Թէհրանի թղթակիցը նոյն լրագրի մէջ յայտնում է այն կարծիքը, որ Եփրեմը միանգամայն անաչառ մարդ լինելով միայն մի նպատակ ունի, ոչնչացնել այն՝ «ինչ կարող է տատանել ազատութեան հիմքերը»։ Դրան իբրև ապացոյց բերում է մօտ անցեալում պատահած հետևեալ դէպքը։

«Տեղական (Թէհրանի) մամուլը յանձին ազդեցիկ և անկուսակցական առաջադիմական «Շարկ» (Արևելք) թերթի՝ հրատարակեց մի ամբողջ շարք յօդուածների, որոնց մէջ պրինց Ֆարման-Ֆարմանին համարում էր մինիստրական կաբինէտի ներդաշնակութիւնը խանգարող մի գործիք։ Լրագրի խմբագրութիւնը յայտնում էր, որ նրա մօտ կան բաւականին կարևոր փաստաթղթեր, որոնք միանգամայն հաստատում են Ֆարման-Ֆարմանի ամենաթունդ ռեակցիոներ լինելը և եթէ մինիստրը կամաւոր չը թողնէ մինիստրական բազկաթոռը, այս փաստաթղթերը պիտի հրապարակ հանվեն։

«Սարսափահար ապազայ մերկացումներից՝ մինիստրը ցանկացաւ, օգտվելով զինուորական դրութիւնից, «փաթաթել» լրագրի գլուխը. այդպիսով նա սարսափահար կանէր նաև մամուլի միւս օրգաններին, որոնք առանց այն էլ բաւականին անգոյն են։

«Նա կարողացաւ համոզել կաբինէտի միւս անդամներին, որ «Շարկի» յօդուածը ուղղված է նորընտիր մինիստրի դէմ և կարող է պղտորել մտքերը ու առաջ բերել հասարակական անդորրութիւնը խանգարող հետևանքներ։ Վճռվեց յանձնարարել ոստիկանութեան, որը գտնվում է Եփրեմի ազդեցութեան տակ, արգելք դնել «Շարկի» վրա։

«Եփրեմը, իմանալով այս, ներկայացաւ մինիստրների խորհրդին և յայտնեց մօտաւորապէս հետևեալը.

«— Թէև ես կանգնած եմ ոստիկանութեան գլուխը, սակայն ես այդ պարտականութիւնները ստանձնել եմ բացառապէս կարգ հաստատելու և ազատութիւնը աւելի անսասան հիմքերի վրա դնելու նպատակով։ Այդ պատճառով սխալ կը լինէր ենթադրել, որ ես համոզմունքով «բիւրօկրատ» եմ։ Կրկնում եմ. այս պարտականութիւնները ես ստանձնել եմ անհրաժեշտութիւն զգալով, այլ ոչ նրա համար, որ ձգտել եմ և ծարաւի եմ եղել որևէ իշխանութեան։ Ես և իմ համախոհները կուել ենք բացառապէս յանուն խօսքի ազատութեան, անձի անձեռնմխելիութեան և հաւասարութեան սկզբունքների, որոնց վրա է հիմնվում իսկական և ազատ սահմանադրական պետութիւնը։ Եւ որովհետև ազատութեան ամենաէական պայմաններից մէկը ներկայանում է տպագրական խօսքի ազատութիւնը, այդ պատճառով ես գտնում եմ, որ «Շարկ» լրագրի դադարեցումը ստորացումն և խորտակումն է այն վեհ սկզբունքի, որի իրականացման համար մենք մեր կեանքն ենք դրել և որի պաշտպանութեան համար մեր կեանքը կը դնենք նաև ապագայում։ Տպագրական խօսքի և նրան զսպելու համար, եթէ նա իրօք յանցանք է գործել, անմերկայի գիւտից յետոյ։ Կասկած չը կայ, որ օսմանեան կառավարութիւնը կաշխատէ վերացնել այդ դաղանութիւնները, բայց ի նկատի ունենալով նախորդ բէժիմի արարքը, նա միայն այն ժամանակ կը կարողանայ ցրել մարդասպանների հետ ունեցած իր մեղսակցութեան կարծիքը, երբ անհրաժեշտ միջոցները ձեռք առնէ, որպէսզի այդ հրէշային մահափորները, որոնց դէմ ընդոստանում է մարդկային խղճմտանքը, այլ ևս չը գործվեն»։

Եւ ահա՝ ի նկատի ունենալով թէ այս զեկուցումը և թէ գերմանական և այլ պատգամաւորների առարկութիւնը, թէ փոքր ազգութիւններից միայն լեհերը և հրէաները չեն ճնշված, այլ և ուրիշ ազգութիւններ, ինչպէս հայերը, մակեդոնացիները և այլք, կօնգրէսը եռանդուն վիճաբանութիւնից յետոյ քուէարկեց և ձայների մեծամասնութեամբ ընդունեց հետևեալ բանաձևը.

«Մաղդութեան XVIII համաշխարհային կօնգրէսը, ստանալով բողոքներ յանուն զանազան հաւաքականութիւնների այն վատ վարվեցողութիւնների մասին, որոնց ենթակայ են փոքրամասնութիւնները զանազան պետութիւնների մէջ, որոնց մասերն են կազմում նրանք, բողոքում է անդադար այն սկզբունքների խախտման դէմ, որոնք յայտարարվել են նախորդ կօնգրէսների կողմից այն ամենի մասին, ինչ վերաբերում է այն յարգանքին, որ պէտք է տալ ազգային փոքրամասնութիւնների անհատական իրաւունքներին և հաւասի ազատութեան»։

Այս բէզօլիւցիայի նպատակն այն էր, որ կօնգրէսը յատկապէս բողոք արտայայտէ Ռուսաստանի դէմ լեհերի և հրէաների դէմ գործ դրած միջոցների վերաբերմամբ։ Սակայն կօնգրէսի անդամները օգոստ. 2-ին կայացած նիստում, ուր քննվում էր այդ առաջարկը, առարկեցին, թէ փոքր ազգութիւններն, որոնք ճնշվում են պետութիւնների կողմից, միայն Ռուսաստանում չեն և միայն լեհերն ու հրէաները չեն, այլ կան և ուրիշ շատ փոքրամասն ազգութիւններ։ Այդ առիթով ուշադրութիւն դարձվեց Բերնի բիւրօյի պատրաստած զեկուցագրի վրա տարվայ դէպքերի մասին, ուր՝ Թիւրքիային վերաբերեալ հատուածի մէջ ասված է. «Օսմանեան կայսրութեան մէջ սփռված զանազան ազգութիւնների թշնամութիւնը չը դադարեց բէժիմի փոփոխմամբ, ոչ ևս սուլթան Աբդիւլ-Համիդի գահազրկութեամբ, որի աղէտալի կառավարութիւնը մեծապէս նպաստեց արմատացնել ու թշնամութիւնը կայսրութեան զանազան էթնիկական խմբերի մէջ։ Նորից խռովութիւններ տեղի ունեցան Հայաստանում։ Նորից տասնեակ հազարաւոր մարդիկ, կանայք, երեխաներ կոտորվեցին թիւրք զինուորների ձեռքով այդ տարաբաղդ երկրում, որի մարտիրոսութիւնը կարելի է համեմատել միայն այն մարտիրոսութեան հետ, որ կրեցին մեքսիկացիները և պէրուվիացիները որոնց մասն են կազմում նրանք, բողոքում է անդադար այն սկզբունքների խախտման դէմ, որոնք յայտարարվել են նախորդ կօնգրէսների կողմից այն ամենի մասին, ինչ վերաբերում է այն յարգանքին, որ պէտք է տալ ազգային փոքրամասնութիւնների անհատական իրաւունքներին և հաւասի ազատութեան»։

Այս բէզօլիւցիայի նպատակն այն էր, որ կօնգրէսը յատկապէս բողոք արտայայտէ Ռուսաստանի դէմ լեհերի և հրէաների դէմ գործ դրած միջոցների վերաբերմամբ։ Սակայն կօնգրէսի անդամները օգոստ. 2-ին կայացած նիստում, ուր քննվում էր այդ առաջարկը, առարկեցին, թէ փոքր ազգութիւններն, որոնք ճնշվում են պետութիւնների կողմից, միայն Ռուսաստանում չեն և միայն լեհերն ու հրէաները չեն, այլ կան և ուրիշ շատ փոքրամասն ազգութիւններ։ Այդ առիթով ուշադրութիւն դարձվեց Բերնի բիւրօյի պատրաստած զեկուցագրի վրա տարվայ դէպքերի մասին, ուր՝ Թիւրքիային վերաբերեալ հատուածի մէջ ասված է. «Օսմանեան կայսրութեան մէջ սփռված զանազան ազգութիւնների թշնամութիւնը չը դադարեց բէժիմի փոփոխմամբ, ոչ ևս սուլթան Աբդիւլ-Համիդի գահազրկութեամբ, որի աղէտալի կառավարութիւնը մեծապէս նպաստեց արմատացնել ու թշնամութիւնը կայսրութեան զանազան էթնիկական խմբերի մէջ։ Նորից խռովութիւններ տեղի ունեցան Հայաստանում։ Նորից տասնեակ հազարաւոր մարդիկ, կանայք, երեխաներ կոտորվեցին թիւրք զինուորների ձեռքով այդ տարաբաղդ երկրում, որի մարտիրոսութիւնը կարելի է համեմատել միայն այն մարտիրոսութեան հետ, որ կրեցին մեքսիկացիները և պէրուվիացիները

Ամերիկայի գիւտից յետոյ։ Կասկած չը կայ, որ օսմանեան կառավարութիւնը կաշխատէ վերացնել այդ դաղանութիւնները, բայց ի նկատի ունենալով նախորդ բէժիմի արարքը, նա միայն այն ժամանակ կը կարողանայ ցրել մարդասպանների հետ ունեցած իր մեղսակցութեան կարծիքը, երբ անհրաժեշտ միջոցները ձեռք առնէ, որպէսզի այդ հրէշային մահափորները, որոնց դէմ ընդոստանում է մարդկային խղճմտանքը, այլ ևս չը գործվեն»։

Եւ ահա՝ ի նկատի ունենալով թէ այս զեկուցումը և թէ գերմանական և այլ պատգամաւորների առարկութիւնը, թէ փոքր ազգութիւններից միայն լեհերը և հրէաները չեն ճնշված, այլ և ուրիշ ազգութիւններ, ինչպէս հայերը, մակեդոնացիները և այլք, կօնգրէսը եռանդուն վիճաբանութիւնից յետոյ քուէարկեց և ձայների մեծամասնութեամբ ընդունեց հետևեալ բանաձևը.

«Մաղդութեան XVIII համաշխարհային կօնգրէսը, ստանալով բողոքներ յանուն զանազան հաւաքականութիւնների այն վատ վարվեցողութիւնների մասին, որոնց ենթակայ են փոքրամասնութիւնները զանազան պետութիւնների մէջ, որոնց մասերն են կազմում նրանք, բողոքում է անդադար նախորդ կօնգրէսների հրատարակած սկզբունքների խախտման դէմ ի մասին այն յարգանքի, որ պէտք է ունենալ փոքրամասնութիւն կազմող ազգութիւնների անհատական իրաւունքների և հաւասների ազատութեան վերաբերմամբ»։

Հ. Առաքելեան

(Վերջը միւս անգամ)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹՌՈՒՑԻԿ ՄՏՔԵՐ

I

Ինչպէս յայտնի է, ամեն մի ժողովուրդ իր հասկացողութիւնն և հայեացքները ընութեան երևոյթների և մարդկային կեանքի մէջ տեղի ունեցող յեղաշրջումների մասին, մի խօսքով իր ամբողջ փիլիսօփայութիւնը շատ աշող կերպով արտայայտում է վերին աստիճանի իմաստալից կարճ ու կորուկ ասացուածքներով կամ առածներով։

Թող որքան ուզում են գլուխ կոտրեն պատմաբանները, սօցիօլօգները և մնտեսագէտները՝ լուսաբանելու համար մարդկութեան անցեալն ու ներկան, հասարակական կեանքի և անհատի երջանկութեան կամ թշուառութեան պատճառները, կամ գտնելու համար մնտեսական երևոյթների և կենսական բարիքների անհաւասար բաշխման բարդ օրէնքները և այլն, սակայն մեր ժողովուրդը վաղուց մատնանշել է այն հիմնական պատճառի կամ շարժառիթի վրա, որ ստիպել է մարդկանց հէնց աշխարհ գալու օրից ցրվել ամեն կողմ և միևնոյն ժամանակ համախմբվել, կազմելով պետութիւններ, իշխանութիւններ և այլն։

Ուստեղ հաց, այնտեղ կաց ժողովրդական առածը ցոյց է տալիս այն հիմնական պատճառներից մէկի վրա, որ առաջացրել է մարդկային կեանքի մէջ հսկայական յեղաշրջումներ թէ անցեալում և թէ ներկայումս։ Հէնց օրինակ՝ Ամերիկայի, Աւստրալիայի և այլ աշխարհամասերի գաղութները։

Ինչն է ստիպում մարդկանց հէնց այժմ էլ ամեն մի երկրից հարիւր հազարներով դաղթել այլ հեռաւոր վայրեր. եթէ ոչ հացի կամ ապրուստի խնդիրը։

Բայց բանից դուրս է գալիս, որ այլևայլ աղէտներն, ինչպէս օրինակ՝ տիֆը, խօլերան, ժանտախտը և այլն, նոյնպէս հետեւում են վերոյիշեալ ուստեղ հաց, այնտեղ կաց կանոնին և շատ հեշտութեամբ մի տեղից գաղթում են ու մի այլ տեղ բուն դնում և իրանց համար նոր հայրենիք պատրաստում։

Սովը և տիֆը, ինչպէս յայտնի է, այնպէս են բուն դրել մեր հայրենիքում՝ Ռուսաստանում, որ այդ երկու աղէտները իւրաքանչիւր տարի որոշ ժամանակ, նախօրօք հրաւիրված հիւրի նման, այցելում են այս կամ այն մի և շատ անգամ մի քանի նահանգներ և իրանց հացը՝ մնունդը հաւաքում։

Սով և տիֆ աղէտներին աւելացան վերջին տարիները խօլերան ու ժանտախտը։ Ահա քանիերորդ տարին է, որ խօլերան Ռուսաստանում մի տեսակ բուն դրեց և պարբերաբար զոհեր է տանում խեղճ ու կրակ ժողովրդից։ Դեռ մի քանի տարի առաջ Ֆրանսիայի գիտական բժիշկները յայտնեցին, որ խօլերան Ռուսաստանում նոր հայրենիք է գտել և նրան իր նոր բընից վանելու համար անհրաժեշտ են այնպիսի խիստ արմատական միջոցներ, որոնք պէտք է կարողանան ժողովրդի կուլտուրան բարձրացնել։

Իսկ այժմ, երբ խօլերան տասնեակ հազարներով զոհեր է տանում և փոխանակ մեղմանալու աւելի ևս տարածվում է Ռուսաստանում, սպառնալով Եւրոպային, Եւրոպական մի քանի գիտականներ առաջարկում են մշակել միջազգային մի շարք միջոցներ խօլերայի դէմ մաքառելու համար և պարտաւորեցնել Ռուսաստանին գործադրելու այդ միջոցները։

Այսպէս ուրեմն՝ խօլերայի նոր հայրենիք ճանաչվեց Ռուսաստանը։ Այս դեռ բաւական չէ, հանդէս եկաւ Օդեսայում նաև ժանտախտը, որ սպառնում է օրէ-ցօր սաստկանալ և տարածվել։ Ինչպէս հաստատեցին բժշկական հետազօտութիւնները, խօլերայի պէս՝ ժանտախտն էլ ոչ թէ դըրսից բերովի է, այլ Օդեսայում վաղուց բուն դրած տեղից է առաջացել։ Այսպէս ուրեմն խօլերան ու ժանտախտը, հետևելով ուստեղ հաց այնտեղ կաց ժողովրդական առածին, բուն են դրել մեզ մօտ և գուցէ դեռ երկար ժամանակ կատարեն իրանց աւերմունքները, քանի որ մեր երկիրը ներկայացնում է պարարտ հող այդ տեսակ հիւրերի համար, որոնք ոչ թէ անկոչ հիւրեր են, այլ ընդհակառակը՝ մեր տգիտութիւնն և կուլտուրական յետամնացութիւնն ամենայն հեշտութեամբ կոչում են, հրաւիրում ու հիւրընկալում մարդկութեան աղէտներ բերող ամեն տեսակ միկրօբներին։

Միակ միջոցը արմատականապէս ազատվելու համար մարդկային կեանքը դոյնական համաճարակներից՝ է ժողովրդի կուլտուրայի բարձրացումը, իսկ այդ բանի համար անհրաժեշտ է անմիջապէս մտցնել ընդհանուր պարտադիր ուսում, դպրոցների թիւը աւելացնել ոչ թէ միայն անչափահասների, այլ և հասակաւորների համար, այսինքն բանալ մի շարք կիրակնօրեայ դպրոցներ գրագիտութիւնը տարածելու նպատակով և առողջապահութեան տարբերական գիտելիքների ուսուցումը դարձնել պարտադիր՝ անխտիր բոլոր դպրոցների համար։ Թէ որպիսի փրկարար հետևանքներ է ունենում առողջապահութեան տարբերական պահանջի՝ մաքրասիրութեան պահպանումը, այդ բանի գեղեցիկ օրինակը բերում է հրաչակաւոր գիտնական Մէչնիկովը։

Անցեալ տարվայ «Рус. Вѣд.»-ի համարներից մէկում տպված յօդուածով յարգելի գիտնականը ցոյց է տալիս, որ Ռուսաստանում տիֆի սաստիկ տարածմանը մեծապէս նպաստում է այն հանգամանքը, որ ռուս ժողովուրդը ընդհանրապէս անմաքրասէր է. հասարակ դասը երկար ժամանակ թողնում է իր մարմնի վրա սպիտակեղէնը, որ և լցվում է ոջիլներով, որոնք սպիտակեղէնի միջոցով, հիւանդից առողջին անցնելով, տարածում են տիֆը, խայթելու վարակելով առողջ մարդու արիւնը։ Մինչդեռ շնորհիւ մաքրասիրութեան՝ Ֆրանսիայում տիֆը շատ վաղուց է անյայտացել, իսկ շատ Ֆրանսիացի կինդանաբաններին մինչև իսկ չէ աղողվում ոջիլ գտնել ու տեսնել... Եւ այդ պատճառով տիֆի տարածման պատճառների և այդ բանում ոջիլի կատարած դերի մասին ուսումնասիրութիւններ անելու համար Ֆրանսիայի գիտնական բժիշկները՝ ստիպված են հեռանալ հայրենիքից և ուղևորվել այլ երկիրներ, օրինակ՝ Ալժիր և այլն...

Sapienti sat. Ա. Նազարէթեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Օրդուբաթ, 5 օգոստոսի

Անցեալ անգամ գրեցինք Դանձայի ս. Յովհաննէս Մկրտչի մասին։ Եւ որպէսզի աւելի պարզ պատկերանայ ընթերցողների առաջ՝ նրա ունեցած արդիւնքի ոչ մի բանի պէտք չը գալը, կարևոր ենք համարում մի քանի բան ևս աւելացնելու։

Յօդուածում յիշված էր, որ գոյացած արդիւնքը հալվում է զանազան ձեռքերում և այդ բանին փաստ կարող է ծառայել այն, որ անցեալ տարի Հանդամէջի բնակիչ, այժմ Թիֆլիսի պատուաւոր քաղաքացի Միհաս Սուլխանեանցը, գալով հայրենիք, այցելում է նաև այդ վանքը, որը աւերակ գտնելով՝ վերանորոգութիւններ է անել տալիս, բայց վանքում փող չը գտնելով իր գրպանից է վճարում եղած մօտաւորապէս 200 ր. ծախքը։

Բարեխիղճ պէտք է լինել ասելու, որ Միհաս Սուլխանեանցի բարեգործութիւնները մեծ են Հանդամէջի և այդ վանքի համար։ Նա է, որ տեղիս 8—9 տնից բաղկացած հայերի համար պահում է քահանայ և բաւական կլորիկ գումարներով եկեղեցի և իւրաքանչիւր տարի իր սեփական միջոցներով հոգում է բոլոր վերանորոգութիւնները, ինչպէս կրկին անցեալ տարի եկեղեցական սենեակների և այս տարի զանազան մեծ ու փոքր ծախքերը։

Արշալոյս Տէր-Յովնանեանց

—

Սղնախ, 7 օգոստոսի

Բժ. Տուրիէվին Սղնախից տարան Թիֆլիսի քանը։ Հաղորդում ենք կատարված դէպքի մանրամասնութիւնը։ Ս. Նունէի վանքի կոյսերից մէկը հիւանդանում է։ Հրաւիրում են բժիշկ Տուրիէվին, որը սկսում է այցելել հիւանդին։ Հիւանդ կոյսն եղել է խուլ և համր։ Բժիշկը հրապուրվում է կոյսի գեղեցկութեամբ և մի անգամ առաջարկում է հիւանդի ընկերուհի կոյսին գնալ դեղ բերելու, իսկ ինքը, մնալով մենակ սենեակում կոյսի հետ, փակում է դուռը, խմացնում է հիւանդ կոյսին քնեցնող դեղ (բանգ) և ապա բռնաբարում է նրան։

Այս ժամանակ վերադառնում է ընկերուհի կոյսը և գտնելով դուռը փակած՝ թխթըխկացնում է։ Դուռը բացվում է, բժիշկը շփոթվում է և խուլ ու համր կոյսը նշաններով հակացնում է, որ իրան բռնաբարել է բժիշկը։

Երկրորդ օրը վանքն են այցելում էկզարխոսը և նահանգապետը, որոնք շրջում էին նահանգում։ Այստեղ նրանք իմանում են պատահած դէպքի մասին և խոստանում պատժել յանցաւորին։ Ապա գնալով Թիֆլիս՝ նահանգապետը հեռագրով հրամայում է քանտարկել բժ. Տուրիէվին։ Պատմում են, որ բժիշկը ցանկութիւն է յայտնել ամուսնանալ բռնաբարված կոյսի հետ, սակայն նրան մերժել են։ N. N.

—

Գիւմրի-Ճարտար (Շուշ. գ.), 4 օգոստ.

Գիւմրի-Ճարտար գիւղը գտնվում է Շուշու գաւառի արևելեան կողմում. նոր աշխարհագրական ցուցակով ունի 258 ծուխ, 2 անշուք եկեղեցի և 3 քահանայ։ Քահանաներից մէկը ծերացած է և ունևոր ու կրթութիւնից զուրկ. երկրորդը՝ տարբրական կրթութիւն ստացած է և վերին աստիճանի չքաւոր, իսկ երրորդը Շուշու Թեմ. դպրոցն աւարտած և երիտասարդ։

Սակայն մի անհասկանալի և առեղծուածային բան է կատարվել վերջերս։ Երկու երիտասարդ քահանաներն արդէն բաւական այդքան սակաւաթիւ ծխականներ ունեցող գիւղի հոգեկան պէտքերը հոգալու, բայց, չը նայած այդ հանգամանքին, այժմ ասպարէզ է եկել մէկը, որ հետևում է «եթէ չը կարողանանք մարդ դառնալ, տէրտէր կը կը դառնանք» հայկական «սկզբունքին»։ Մի գիւղ, որ հազիւ է կարողանում բաւականութիւն տալ իր 2 երիտասարդ և աղքատ քահանաների գոյութեան պահանջներին, երրորդ քահանայ ունենալու դէպքում ինչ դրութեան մէջ կը դնի առաջին 2 քահանաներին՝ նիւթականի տեսակէտից։

Գիւղիս քահանայութեան այդ երրորդ թեկնածուն եթէ լիներ մի կրթված, ուսումնական անձնաւորութիւն, որը ոչ թէ ի նկատի առնէր գրպանը, այլ հոգեկանը, այդ դեռ հասկանալի կը լինէր։ Սակայն ցաւն էլ հէնց այն է, որ բանն այդպէս չէ։ Այդ նոր թեկնածուն անցեալը բոլորովին անհամապատասխան է քահանայական կոչմանը, իսկ ներկան էլ հաւատ չէ ներշնչում ապագայի համար։

Ամենուրեք միշտ հնչվում է, թէ գաւառը յետամնաց է, տգիտութեան մէջ է խարխափում, պէտք է դարմանել այդ խորունկ վէրքերը։ Այդ անխախանձելի դրութիւնը բարեւաւելու համար պէտք է լուրջ ուշադրութիւն դարձնել, որպէսզի գիւղերը կրթված և ուսումնական քահանայ ունենան, դպրոցների թիւը շատանայ։ Բայց իրականութիւնն արդեօք տալիս է մեր առաջադրած պահանջները։ Ցաւալի է ասել, որ ոչ։ Մեզանում թեմական կօնսիստօրիան, յաճախ, լռելեայն ընդունում է տպէտ տիրացուների խնդիրները և փոխանակ երեսներին զարկելու բարոյական անցեալը և պահանջելու կրթական սահմանված ցենզը, ժողովրդի հանուր համաձայնութիւնը՝ առաջարկութիւն է անում սինոդին։

Ծանր է մեղ ասել, բայց փաստ է, որ կաշառքի դրութիւնն այս կամ այն կերպ դեռ իր գոյութիւնը պահպանում է մեր հասարակական եկեղեցական վարչութիւնների ու գործառնութիւնների մէջ, և այդ յոռի սիստեմի շնորհիւ շատ անգամ գայլերը պահպան և առաջնորդ են կարգվում մեր ժողովրդական հօտերին։

Այդպիսի վատ դրութեան պատճառով է եղել, որ այս անգամ էլ մեր գիւղում լոյս է ընկել երրորդ քահանայ ունենալու հարցը։

Արդեօք մեր արիւնաքամ եղած գիւղացին այնքան ոյժ, կարողութիւն ունի՞ երեք քահանայ պահելու, քանի որ ծանրաբեռնված է հազար ու մի տնտեսական ծախքերով և արքունական հարկերով։ Ո՛չ, նա տկար է, նա կորցրել է իր վաղեմի և դարաւոր վաստակած կայքն ու գոյքը հայթուրքական ընդհարման ժամանակ։ Նա դժուարութեամբ է կարողանում պահել իրան և ի միջի այլոց երկու աննախանձելի վիճակ ունեցող քահանաներին և հազիւ թէ կարողանայ պահել և մի երրորդի։

Հոգևոր իշխանութիւնը պարտական է լուրջ ուշադրութիւն դարձնել մեր գաւառի այդ ցաւոտ կողմի վրա։ Գիւնէյցի

—

Բօրժոմ, 9 օգոստոսի

Բօրժոմը, այդ գեղեցիկ ամարանոցը, որի բնութիւնը այնքան գեղեցիկ կերպով նկարագրել է հանդուցեալ Զանչանը, այս տարի կատարեալ պատուհաս է ներկայացնում ամարանոց եկողների համար։ Մարդիկ վստահ, որ այդ արիստոկրատները ամարանոցում իրանց կեանքը կատարեալ ապահով է զանազան վարակիչ հիւանդութիւններից, շտապել են այնտեղ։ Բայց ով զարմանք։ Մարդիկ շնորհակալութեան փոխարէն, այսօր անիծում են իրանց բաղդը և նախանձում մի յետընկած ամարանոցի, ինչպիսին է Ծղնէթ գիւղը։ Կեանքը տակն ու վրա է եղել շնորհիւ այն հանգամանքի, որ սաստիկ տարածված է ամարանոցում որովայնային տիֆ (брюшной тифъ) հիւանդութիւնը։ Մի ընտանիքում միայն 5 հոգի պառկած են ներկայումս, իսկ բժիշկների ասելով 40-ից աւելի հիւանդներ կան ամարանոցում։ Սարսափահար ժողովուրդը սկսել է ժամանակից առաջ վերադառնալ իրանց տեղերը։ Այս ամենից յետոյ հարց է առաջ գալիս, թէ ուր է տեղական սանիտարական մարմինը. միթէ նա գոյութիւն չունի։ Պահանջվում է շուտափոյթ լուրջ ուշադրութիւն հիւանդութիւնը արմատախիլ անելու համար։ Դ.

—

Բալախանի, 6 օգոստոսի

Երէկ, ամսոյս 5-ին, ցերեկվայ ժամը 12-ին, Արբանցի նաւթահանքերի կառավարիչ Արսէն Թումանեանը իր պատրօնի հետ նաւթահանքում ոռճիկներ բաժանելիս՝ գրասենեակ են մտնում երեք հայ երիտասարդներ զինված «Մաուզէր» սիստեմի ատրճանակներով և բղաւում՝ «ձեռքները վեր»...։ Դրամները, 1521 ր., յանձնվում են ինքնակոչ հիւրերին։

Ապա վերցնում են հանքատերերից մէկի՝ Ադամեան կ.-ի ժամացոյցը, բայց երբ կառավարիչը յայտնում է, որ նա էլ ծառայող է, «գաղափարական» աւազակները յետ են տալիս։ Պահանջում են և կառավարչի գրպանում եղած դրամները։ Վերջինս հանում է Բալախանուն յատուկ կեղտոտ, սև մուտքանի չքաւոր, իսկ երրորդը Շուշու Թեմ. դպրոցն աւարտած և երիտասարդ։

Սակայն մի անհասկանալի և առեղծուածային բան է կատարվել վերջերս։ Երկու երիտասարդ քահանաներն արդէն բաւական այդքան սակաւաթիւ ծխականներ ունեցող գիւղի հոգեկան պէտքերը հոգալու, բայց, չը նայած այդ հանգամանքին, այժմ ասպարէզ է եկել մէկը, որ հետևում է «եթէ չը կարողանանք մարդ դառնալ, տէրտէր կը կը դառնանք» հայկական «սկզբունքին»։ Մի գիւղ, որ հազիւ է կարողանում բաւականութիւն տալ իր 2 երիտասարդ և աղքատ քահանաների գոյութեան պահանջներին, երրորդ քահանայ ունենալու դէպքում ինչ դրութեան մէջ կը դնի առաջին 2 քահանաներին՝ նիւթականի տեսակէտից։

Գիւղիս քահանայութեան այդ երրորդ թեկնածուն եթէ լիներ մի կրթված, ուսումնական անձնաւորութիւն, որը ոչ թէ ի նկատի առնէր գրպանը, այլ հոգեկանը, այդ դեռ հասկանալի կը լինէր։ Սակայն ցաւն էլ հէնց այն է, որ բանն այդպէս չէ։ Այդ նոր թեկնածուն անցեալը բոլորովին անհամապատասխան է քահանայական կոչմանը, իսկ ներկան էլ հաւատ չէ ներշնչում ապագայի համար։

Ամենուրեք միշտ հնչվում է, թէ գաւառը յետամնաց է, տգիտութեան մէջ է խարխափում, պէտք է դարմանել այդ խորունկ վէրքերը։ Այդ անխախանձելի դրութիւնը բարեւաւելու համար պէտք է լուրջ ուշադրութիւն դարձնել, որպէսզի գիւղերը կրթված և ուսումնական քահանայ ունենան, դպրոցների թիւը շատանայ։ Բայց իրականութիւնն արդեօք տալիս է մեր առաջադրած պահանջները։ Ցաւալի է ասել, որ ոչ։ Մեզանում թեմական կօնսիստօրիան, յաճախ, լռելեայն ընդունում է տպէտ տիրացուների խնդիրները և փոխանակ երեսներին զարկելու բարոյական անցեալը և պահանջելու կրթական սահմանված ցենզը, ժողովրդի հանուր համաձայնութիւնը՝ առաջարկութիւն է անում սինոդին։

Ծանր է մեղ ասել, բայց փաստ է, որ կաշառքի դրութիւնն այս կամ այն կերպ դեռ իր գոյութիւնը պահպանում է մեր հասարակական եկեղեցական վարչութիւնների ու գործառնութիւնների մէջ, և այդ յոռի սիստեմի շնորհիւ շատ անգամ գայլերը պահպան և առաջնորդ են կարգվում մեր ժողովրդական հօտերին։

Այդպիսի վատ դրութեան պատճառով է եղել, որ այս անգամ էլ մեր գիւղում լոյս է ընկել երրորդ քահանայ ունենալու հարցը։

Արդեօք մեր արիւնաքամ եղած գիւղացին այնքան ոյժ, կարողութիւն ունի՞ երեք քահանայ պահելու, քանի որ ծանրաբեռնված է հազար ու մի տնտեսական ծախքերով և արքունական հարկերով։ Ո՛չ, նա տկար է, նա կորցրել է իր վաղեմի և դարաւոր վաստակած կայքն ու գոյքը հայթուրքական ընդհարման ժամանակ։ Նա դժուարութեամբ է կարողանում պահել իրան և ի միջի այլոց երկու աննախանձելի վիճակ ունեցող քահանաներին և հազիւ թէ կարողանայ պահել և մի երրորդի։

Հոգևոր իշխանութիւնը պարտական է լուրջ ուշադրութիւն դարձնել մեր գաւառի այդ ցաւոտ կողմի վրա։ Գիւնէյցի

—

Բօրժոմ, 9 օգոստոսի

Բօրժոմը, այդ գեղեցիկ ամարանոցը, որի բնութիւնը այնքան գեղեցիկ կերպով նկարագրել է հանդուցեալ Զանչանը, այս տարի կատարեալ պատուհաս է ներկայացնում ամարանոց եկողների համար։ Մարդիկ վստահ, որ այդ արիստոկրատները ամարանոցում իրանց կեանքը կատարեալ ապահով է զանազան վարակիչ հիւանդութիւններից, շտապել են այնտեղ։ Բայց ով զարմանք։ Մարդիկ շնորհակալութեան փոխարէն, այսօր անիծում են իրանց բաղդը և նախանձում մի յետընկած ամարանոցի, ինչպիսին է Ծղնէթ գիւղը։ Կեանքը տակն ու վրա է եղել շնորհիւ այն հանգամանքի, որ սաստիկ տարածված է ամարանոցում որովայնային տիֆ (брюшной тифъ) հիւանդութիւնը։ Մի ընտանիքում միայն 5 հոգի պառկած են ներկայումս, իսկ բժիշկների ասելով 40-ից աւելի հիւ

ղով և նաւթով ներկված հին պօրտմօնէն և դնում առաջներին, ասելով որ այդ իր պօրտմօնէն է, որի մէջ ոչինչ չը կայ. մինչ-դեռ 130 ր. է լինում մէջը, բայց շնորհիւ կեղտոտ դրութեան դրամաշորթները չեն վերցնում։ Եւ այդպիսով տանում են 1521 ռուբլին։

Այդ միևնոյն ժամին Բալախանում տեղի է ունենում «Ոսկի» նաւթահանքում հրդեհ, ուր և քաղաքից գալիս է քաղաքապետ Մարտինովը, որը, լսելով այդ դէպքը, անհրաժեշտ կարգադրութիւնը և հրամանը արձակում է։

Հետևանքը եղաւ այն, որ այսօր առաւօտեան դրամաշորթները ձերբակալվեցին և յանձնվեցին իշխանութեան։

Ձերբակալվածների մօտ գտնված է աւելի քան 800 ր.։

Խուզարկու ոստիկանութեան գործակալները ասել են ի միջի այլոց հետևեալը.

«Մենք դրանց ձերբակալել ենք տուել, սակայն դարձեալ ազատվել են։ Հէնց այս երեկոյեան մենք կը ձերբակալենք այդ դրամաշորթներին, սակայն ազնիւ խօսք տուէք, որ քննութեան ժամանակ չէք պաշտպանի դրանց և չէք յայտարարի, որ բռնվածները ձեզ կողոպտողները չեն»...

Այստեղ, ընթերցող, շատ դառն ճշմարտութիւններ կան... Խուզարկու ոստիկանութեան գործակալը, շնորհիւ քաղաքապետ Մարտինովի, այնպիսի մի ճշմարտութիւն է պահանջում, որ մարդ ակամայ անցեալը, 1905—1908 թ. թ. է յիշում։

Այդ թալանիներում գործակալները իրանց կոչման վրա չէին կանգնած, իսկ կողոպտվող քաղաքացին տասը երես ունէր։

Քաղաքացին կողոպտվում, թալանվում և գողացվում էր, և երբ թալանողին, գողացողին ձերբակալում էին (5% միայն, այն էլ ֆօրմի համար), քաղաքացին սարսափի ազդեցութեան տակ իրան կողոպտողին ազնիւ մարդ էր ցոյց տալիս դատարանում... Սակայն այսօր խուզարկու ոստիկանութեան գործակալը և քաղաքացի կողոպտողը պայմանաւորվում են ճիշդ խօսել և ազնիւ խօսքի մասին են խօսում...

Անյայտ պատճառներից հրդեհին զոհ գնաց «Ոսկի» նաւթահանքը, որի վնասը մօտ 40,000 ր. է։

Այրվեց և Միտրօֆանովի հանքը։

Եղանակները վերջին մի քանի օրերս հով են, սակայն խալերան օրէ-ցօր իր զոհերի թիւը բազմացնում է։

Քաղ. վարչութիւնից մեզ ոչ մի սպասելիք չունենք. Ասում է, որ քաղաքապետութիւնը արգելէ քաղաքիս միրգ մատակարարելը, որը միայն կարող է վերջ դնել խալերային։ Ս. Գարագաշ

—

Նոր-Բայազէտ, 4 օգոստոսի

Երևանի նահանգը ճանաչված լինելով խալերայից անբարեբաղդ և նահանգի մի քանի կէտերում (Իգդիր, Ղարաքիլիսա և այլն) այդ հիւանդութեան դէպքեր տեղի ունեցած լինելով, Երևանի նահանգապետը պաշտօնապէս առաջադրեց քաղաքային վարչութեան՝ միջոցներ ձեռք առնել խալերայի դէմ կուռելու համար։

Այդ առիթով երէկ, ամսոյս 3-ին, հերթական հարցերի թւում, դումայում դրված էր նաև այդ հարցը։ Քաղ. վարչութիւնը մանրամասն քննութեան առնելով այդ հարցը միաձայն որոշեց.

1) Քաղաքը մաքրելու համար վարձել երկու սայլակներ և մի ամավայ ընթացքում դուրս տանել տալ բոլոր անմաքրութիւնները քաղաքից։

2) Ունենալ 6—7 պահապաններ, որոնք հսկէին թէ գետերի վրա, ուր ազգաբնակութիւնը աղբ և զիբիլներ է թափում և թէ քաղաքի շուրջը գտնված ճանապարհների վրա, որտեղից խալերայով վարակված մարդիկ մուտք չը գործեն մեր քաղաքը՝ առանց նախապէս դեզինֆեկցիայի ենթարկվելու։

3) Վարձել խալերային բարակներ՝ 2—3 սենեակներից բաղկացած, տալով կարգին յարմարութիւններ հիւանդներին խնամելու համար։

4) Գնել ախտահանիչ դեղեր և այլ պարագաներ (կօրբօլեան թթուտ, կիր, սրսկիչ և այլն)։

5) Ունենալ բժիշկ (խալերայի առաջին դէպքն եղած ժամանակ) և ֆելդշեր և այլն ըստ կարգին։

Նախահաշիւ կազմելով թւածս նախանկան միջոցների վերաբերմամբ քաղ. վարչութիւնը ծախս է ունենալու իւրաքանչիւր ամսի համար 650 ր., և որովհետև այդ ծախքերը կատարելու համար ոչ մի ազատ գումար և ոչ մի միջոց չունի քաղ. վարչութիւնը, ուստի որոշվեց դիմել նահանգապետին և խնդրել, որ այդ գումարը իբրև օժանդակութիւն տրվի քաղաքին կառավարութեան կողմից, քանի որ մեր քաղաքը ինքնուրոյն կերպով այդ ծախքերը հոգալու կարողութիւնից զուրկ է։

Մեզանում՝ թէ քաղաքում և թէ գաւառում՝ առայժմ խալերային հիւանդութեան նշաններ չը կան, բայց և այնպէս պէտք է զգոյշ լինել այդ աւերիչ հիւանդութիւնից զերծ մնալու համար։ Ցայտնի է, սակայն, որ մեր քաղաքը բոլորովին զուրկ լինելով այդ-ինքից և մրգեղէններից՝ միշտ կարօտ է մնում վերջիններին, ուստի ձեռքն ընկած դէպքում ժողովուրդը, մանաւանդ աղքատ և չքաւոր դասը, ագահութեամբ ուտում է խակ մրգեր, փտած, բորբոսնած և թթված զանազան պտուղներ և ընդեղէններ, որոնք թէև մինչև այժմ ոչ մի հիւանդութիւն չեն առաջացրել, բայց, յամենայն դէպս, կարող են վտանգաւոր լինել։ Եւ թէպէտ մեր ոստիկանութիւնը մեծ հսկողութիւն ունի մրգավաճառների վրա, բայց և այնպէս տեղական ազգաբնակութիւնը, ինչպէս ասացի, կարօտ լինելով մրգեղէնի, գաղտնապէս ուտում է թէ խակերը, թէ փտածները և թէ ճիլված ու փչացածները, ոչինչ դաղափար չունենալով վարակման մասին, համարելով այդ բանը ճակատագրական մի երևոյթ։

Բայց այնուամենայնիւ այդ բոլոր անկանոն պայմանների դիմաց պէտք է շնորհակալ լինել տեղական կլիմայից և առողջարար օդ ու ջրից, որոնք ոչ մի կողմից չեն նպաստում որևէ հիւանդութեան տարածմանը և դեռ ազդում են աջող կերպով օրգանական գործարանների վրա։ Հակառակ դէպքում, եթէ մրգեղէնների այդպիսի անսովորմալ գործածութիւնը, բնակչութեան անփութութիւնը և ժողովրդի ոչ մաքրասէր կենցաղավարութիւնը տեղի ունենար մի ուրիշ տեղում, հաւատացէք, ազգաբնակութեան կէսն արդէն վարակված կը լինէր խալերային համաճարակով։

Վերջում աւելացնենք մի բան. սրանից մի քանի օր առաջ, երբ սանիտարական մասնախմբեր էին կազմակերպվում քաղաքիս առողջական դրութեան վրա հսկելու, ձայն կար դասախօսութիւն սարքելու խալերայի մասին, բայց մինչև օրս ոչ մի դասախօսութիւն տեղի չունեցաւ, չը նայած որ մեծ բազմութեամբ ինտելիգենցիա է հաւաքվել մեզանում այս տարի։

Գ. Սինանեան

ՆԱՄԱԿ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

—

4 օգոստոսի

Պետերբուրգի հայ գեղարուեստասէրների ու մասնագէտների մի խումբ կազմակերպում է մի նոր ընկերութիւն՝ «Հայ գեղարուեստական ընկերութիւն» („Армянское Общество изящныхъ искусствъ“) անունով, որի նպատակը պիտի լինի սէր և հետաքրքրութիւն զարթեցնել դէպի գեղարուեստը հայ հասարակութեան զանազան խաւերում։

Ընկերութիւնը կունենայ նկարչական-երաժշտական երեկոյթներ, դասախօսութիւններ գեղարուեստից զանազան ճիւղերի վերաբերեալ, հայկական երեկոյթներ, պատկերահանդէսներ, կօնցերտներ և այլն։ Ընկերութիւնը ամեն կերպ պիտի օժանդակէ հայկական գեղարուեստի (հին կուլտուրայի) ուսումնասիրութեան և նիւթեր հաւաքելուն՝ ժամանակին նոր ստիլ վերաստեղծելու համար։

Ընկերութիւնը կը յայտարարէ կօնկուրս գեղարուեստից զանազան ճիւղերի վերաբերեալ (ինչպէս՝ նկարչական, երաժշտական, ճարտարապետական, քանդակագործութեան և այլն), և աջող գործերին կը տրվի պրէմիա։

Կօնկուրսների ժիւրիին կը մասնակցեն բացի ընկերութեան մասնագէտ անդամներից՝ նաև տեղիս մասնագիտական բարձրագոյն դպրոցների պրոֆեսօրների ներկայացուցիչները։ Ընկերութիւնը կունենայ իր հրատարակութիւնները և գեղարուեստական հանդէսը։

Մշակված ծրագիրը արդէն յանձնված է կառավարութեան ի հաստատութիւն։

Պետերբուրգի նկարչական ընկերութիւններից մէկը, «Новый союзъ передвижныхъ выставокъ», որ 1908 թ-ին իր շարժական պատկերահանդէսները բացեց Կովկասի զանազան քաղաքներում, ինչպէս՝ Բաքու, Պետիգօրսկ և այլն, ներկայումս միացնելով իր հետ ռուս նկարչական բոլոր ընկերութիւնները՝ հոկտեմբերի 20-ից պատկերահանդէս է բանալու Լօնդօնում՝ անգլիական և ռուս դեսպանների և այլ բարձրաստիճան անձանց հովանաւորութեամբ։

Նորերս Կայսերական օպերայի դիրիժօր և կօմպօզիտօր Գ. Կազաչենկօն ուղևորվելով Ղրիմ, հաւանականաբար կանցնի Կովկասեան զանազան հայաշատ քաղաքները նիւթեր հաւաքելու։

Ներկայումս Գ. Կազաչենկօն առանձնապէս զբաղվում է հայկական երաժշտութեամբ։ Դրա օպերաներից «Панъ сотникъ» այս տարի ժողված է Կայսերական Մարինսկի օպերայի բեմերտուարի մէջ։ Օք.

ԱՆԴՐԿԱՍՊԵԱՆ ԵՐԿՐԻ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՐՑԸ

—

Դուշակ, 2 օգոստոսի

Անդրկասպեան երկիրը իր լայնատարած դաշտերով և բարեբեր հողով եթէ համեմատելու լինենք ուրիշ երկիրների բերրի հողերի հետ՝ առաջին տեղը կը բռնէ, բայց ջրի պակասութեան պատճառով հողերի 90%-ը մնում է համարեա թէ առանց ցանելու։

Ասխաբադի շրջակայ գիւղերը իրանց ունեցած քիչ ջրի մեծ մասից զրկվեցին շնորհիւ այն հանգամանքի, որ քաղաքը մեծացել է և սրա փողոցները և բակերում գտնված փոքրիկ պարտէզները ջրելու համար վերցված է թիւրքմէնների ջուրը։

Ասխաբադի մերձակայ գիւղերի գեղջուկները մեծ մասամբ գաղթեցին դէպի աւելի ջրաբեր վայրերը, այն է Թէջեն, Մերվ, Բայրամ-Ալի։ Այդպիսով՝ փոխանակ աճելու՝ քայքայվում են Ասխաբադի շրջակայքի բոլոր գիւղերը՝ զնասելով քաղաքի առևտրի զարգացմանը։

Թէջենի ջրի առատ լինելը բաղդի բերումնէ։ Որ ձմեռ որ Աւղանստանի սահմանակից սարերում ձիւնն առատ գայ, նոյն տարին մայիսի 10—15-ից մինչև յուլիսի 15—25-ը տևում է ջրի հոսելը։ Հաշարեա թէ այդպիսի ջրառատ տարի 2—3 տարվայ ընթացքում մի անգամ է լինում. մնացեալ ժամանակ խեղճ գիւղացիների ցանած սերմը՝ դեռ չը բուսած՝ չորանում է կիզիչ արևի ճառագայթներից։

Կախկա, Դուշակ, Կօլշօր, Արտիկ և մնացեալ փոքրիկ կայարանների ջուրը հոսում է Պարսկաստանի լեռներից։

Բանի դեռ Պարսկաստանում գիւղատնտեսութիւնը քնած դրութեան մէջ էր և գիւղացիք քիչ էին պարապում հողագործութեամբ, այդ կայարաններին կից գտնված դաշտերի ցանքսը առատ էր լինում և բերքը չէր չորանում յունիս ամսում։ Բայց ներկայումս ուրիշ է. պարսիկ ժողովուրդը բացի այգեգործութիւնից՝ սկսել է պարապել ընդարձակ տարածութեան վրա հողագործութեամբ, հետևապէս և Պարսկաստանից դէպի ռուսական հողերը հոսող ջրի քանակութիւնը մեծապէս նուազել է մեզ համար։ Եւ եթէ այսպէս շարունակվի, մի քանի տասնեակ տարիներից յետոյ բոլորովին ջուր չէ կարող հոսել Պարսկաստանից դէպի մեր երկիրը։ Եւ Անդրկասպեան շրջանը կընկնի ջրային մի անասելի կրիզիսի մէջ, եթէ հաշի չառնենք սահմանակից բարձր լեռներից հոսող սակաւ ջրերը, ինչպէս և թիւրքմէնների հատ-հատ «քահրիզները»։

Վերջին տարիներս յաճախ ականատես էինք լինում, թէ ինչպէս յունիս ու յուլիս ամիսներում ջուրը կէսից աւելի պակասում է։ Իսկ դրա հետևանքն այն է լինում, որ բերքը չորանում է մեծ մասամբ։

Մերվ քաղաքը, շնորհիւ ջրի առատութեան, ստեղծել է իր շուրջը լաւ շուկայ, որի նմանը Անդրկասպեան երկրում չը կայ։ Տարէ-ցտարի արագօրէն աճում է թէ քաղաքը և թէ շրջակայ թիւրքմէն ազգաբնակութիւնը՝ զգալիօրէն ապահովվելով նիւթապէս։

Նշանները, սակայն, ցոյց են տալիս, որ ջրի կողմից տապակվող այդ վայրերը միշտ էլ չեն մնալու այդ դրութեան մէջ։ Սեփական ջուր ունենալու յոյսերը վերջին ժամանակներս աւելանում են։

Ահա մի տարի է, ինչ արծարծվում է Զարջօյի գետի ջրից մի մեծ ժաս արհեստական ճանապարհով Մերվ-Ասխաբադի դաշտերը տանելու հարցը։ Այդ լուրջ գործին, ինչպէս լսում ենք, պիտի ձեռնարկվի այս տարի։ Ասում են, թէ այդ կուլտուրական մեծ գործի նախաձեռնութիւնը ստանձնել է Մօսկվայի առևտրականութեան բիրժան, ապատելու համար ժողովուրդն այն ծանր ու հոգեմաշ դրութիւնից, երբ խեղճ շինականը, չը կարողանալով ոչինչ անել, ձեռքերը յուսահատօրէն ծալած՝ ականատես էր լինում իր արտերը չորանալու սրտաճմլիկ տեսարանին։

Մի քանի օրից ի վեր Կախկա և Դուշակ կայարանների միջև, փոքրիկ Արմանապաթ կայարանի շրջակայքում մի խումբ անգլիացիք փորձեր են անում, իմանալու համար թէ ջուր հանդ արդեօք այդ շրջանի հողի ծոցում։ Եթէ փորձը դրական հետևանքներ տայ, անգլիացիները ժամադիր են կապալով վերցնել այդ հողերը և հարիւրաւոր վայրերում հորեր փորելով ջուր հանել մեքենայի միջոցով։

Մի կողմից Զարջօյի գետից ջուր բերելը, միւս կողմից անգլիացիների այդ փորձերը թէ հողագործ ժողովրդին և թէ տեղային առևտրականներին ուրախութիւն են պատճառել։

Այսպէս թէ այնպէս՝ հաւանական է, որ մօտիկ ապագայում այդ վայրերը սեփական ջուր կունենան, թէև ծանր պայմաններով։

Իսկ եթէ ոչ առաջինը և ոչ էլ վերջինը չաջողվին, այդ դէպքում կարելի է առանց տատանվելու նախատեսել, որ Կրասնօվոդսկից սկսած մինչև Թէջեն և Մերվ ոչ մի առաջադիմութիւն տեղի չի ունենայ հողագործութեան տեսակէտից, հետևապէս և չի աճի և այդ ընդարձակ վայրի շուկան, այլ զգալապէս կը դիմէ ստատիճանական անկման։ Առ. Խուբլարեան

ՇԱՆԵՎԱՎՍԿԻԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՄՕՍԿՎԱՅՈՒՄ

II

Շանեավսկիի անուան համալսարանն անցեալ տարի վերջացրեց իր գոյութեան երկրորդ տարեշրջանը։ Առաջին տարին համալսարանն 2 ճիւղից էր բաղկացած—հասարակական-իրաւագիտական և պատմա-բնագիտական, իսկ անցեալ 1909/10 ուս. տարին բացվեց նաև հասարակական-փիլիսօփայական ճիւղ։ Թէև համալսարանը ժամնողից որևէ ցենզ չէ պահանջում, բայց վարչութիւնը ցանկութիւն է յայտնում, որ ունկնդիրները միջնակարգ կրթութեան պատրաստութիւն ունենան, քանի որ դասախօսութիւնները լուրջ մասնագիտական բնոյթ են կրում, ինչպէս կայսերական համալսարանում։ «Համալսարանի հիմնական նպատակն է,—կարդում ենք 19¹⁰/₁₁ ուս. տարվայ ծրագրի մէջ,—ծառայել բարձր գիտական կրթութեան լայն տարածմանը և ժողովրդի սէրը գրաւել դէպի գիտութիւն և ուսում։ Ուստի համաձայն իր հիմնական նպատակի համալսարանն ունի 2 բաժին—ակադեմիական և գիտական-ժողովրդական. վերջինում, ինչպէս արտասահմանեան համալսարաններում, կազմված են տարբերական գիտական կուրսեր, որոնք բաւարարութիւն պիտի տան հասարակութեան այն խաւերին, որոնք սկզբնական թոյլ կրթութիւն ունեն ստացած։ Ակադեմիական բաժինը կազմված է, որպէս բարձր հասարակական դպրոց, որի նպատակն է սիստեմատիք բարձր կրթութիւն տարածելը, և ի նկատի ունի ունկնդիրների այն մասը, որ միջնակարգ դպրոցի պատրաստութիւն ունի»։ 16 տարեկանից բարձր ամեն ոք առանց սեռի, կրօնի և կրթութեան խտրութեան կարող է ունկնդիր լինել. կարելի է լսել մի ժամանագիտութեան և բոլոր առարկաներ և մէկը կամ մի քանիսը. դասախօսութիւնները տեղի են ունենում երեկոները 5—10 ժամը։ Երեք ճիւղերում ևս առարկայական սիստեմն է ընդունված, սակայն ի նկատի առնելով լսողների որակը՝ կան և 3 տարվայ կուրսեր. նրանք, որոնք միջոցներից զուրկ են և երկար Մօսկվայում ապրել անկարող են, դրանց համար 2 տարվայ կամ 4 սեմեստրի կուրս է որոշված, յուսալով թէ պիտի լուրջ և ինտենսիվ զբաղմունք ցոյց տան. իսկ նրանք, որոնք երկար կարող են Մօսկվա մնալ, դրանց համար 3 տ. կամ 6 սեմեստր։ Բացի դասախօսութիւններից լինում են նաև գործնական պարապմունքներ լաբարատորիաներում և սեմինարներ իրաւագիտական ու փիլիսօփայական ճիւղերի ուսանողների համար։ Տարեկան ուսումնավճարն է 45 ր., իսկ կէս տարվանը 25 ր., չքաւորներին կամ բոլորովին ազատում են կամ պակասեցնում վճարը. վարչութիւնն ամեն միջոց գործ է դնում, որ ուսումը մօտիկ ապագայում իսպառ ձրի դարձնի։

Այս 19¹⁰/₁₁ ուս. տարին տեղի կունենան կարճ-ժամանակեայ դասախօսութիւններ համալսարանի իրաւագիտական բաժնի ուսանողների և այլ ցանկացողների համար՝ տեղական ինքնավարութեան—քաղաքային և զեմստվային—և կօօպերացիայի ու մանրանտեսութեան մասին։ Աչքի առաջ ունենալով այս դասախօսութիւնների չափազանց շահագրգիռ լինելը, մանրամասն դնում ենք նրանց ցուցակը։

1) Տեղական ինքնավարութեան հիմքերը և նպատակը—կը կարդան պրոֆ. Էլիսեբատով և պր.-դոց. Զագրեցկով, 2) Տեղական ֆինանսները և 3) Զեմստվային ստատիստիկա—պրոֆ. Ա. Ֆօրտունատով, 4) Քաղաք. ստատիստիկա—Միխայլովսկի, 5) Գնահատման գործեր—Սվավիցկի, 6) Ժողովրդական կրթութիւն—Սպերանսկի և Խմելով, 7) Տեղ. ինքնավ. օրգանների սոցիալ-քաղաքականութիւնը—պր.-դոց. Գարբունով, 8) Հասար. առողջապահութիւն և բժշկականութիւն—Պետ. Դում. անդամ Շինգարեվ, և այլն դասախօսութիւններ, որոնք կը կարդացվեն սեպտեմբերի 15-ից մինչև նոյեմբերի 1-ը։

Իսկ կօօպերացիայի և մանրանտեսութեան զանազան ճիւղերի մասին, որ տեղի կունենայ նոյեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 15-ը, դասախօսելու հրաւիրված են հետևեալ անձինք. Ուգրիմով (Գերմանիայից), պրոֆ. Բաժայեվ, պրոֆ. Տուգան-Բարանովսկի (Պետերբուրգից), պր.-դոց. Կրասնակուտսկի, Վօրմս, Տօտօմեանց, պրոֆ. Անցիֆերով, Վոլկով, Ֆրանկֆուրտ, պրոֆ. Օզերով, պրոֆ. Ֆօրտունատով և այլք։

Շանեավսկիի համալսարանի մշտական 3 ճիւղերի համար հրաւիրված են Կայսերական Համալսարանի և Գիւղատնտեսական Ակադեմիայի հետևեալ պրոֆեսօրները։

Իրաւագիտական բաժնում—պր. Ս. Ա. Մուրոմցեվ, Կաբլուկով, Խվոստով, Ֆօրտունատով, Ֆիլիպով, Կիզեվետտեր, կոմս Կամարովսկի, պր.-դոցենտներ Ֆ. Կակոշկին (երկրորդ Դումայի անդամ), Գերնետ, Գենդել, Պալեանսկի, Սիրօտեանինով, Կրասնոկուտսկի, Ուստինով, Գարբունով, Զագրեցկով, Կիստեակովսկի և այլն։

Փիլիսօփայական բաժնում—պրոֆ. Սպերանսկի, Կիզեվետտեր, պր.-դոցենտներ Վիկտորով, Դէ-լա-Բարա, Կուբիցկի, Բօգանով, Այխենվալդ, Գրուզինսկի, Ս. Ֆօրտունատով և այլն։

Բնագիտականում—պրոֆէսօրներ Վուլֆ, Խուդեակով, Շերեմետեվսկի, Պաւլով, Կուլագին, պր.-դոցենտներ Բեֆօրմատսկի, Բլաժկո, Լազարև, Արտարի, Սինիցին, Շատերնիկով, տիկ. Ե. Շչեպկինա, տիկ. Մ. Պավլովա և այլք։

Ահա, ընթերցող, Ռուսաստանի առաջին ազատ քաղաքային համալսարանի պատկերը, որտեղ ամեն ոք, որ կամենում է ոչ թէ սովորել դիպլօմ ստանալու և մեր քաղաքներում չաղ-չաղ ռոճիկներով պաշտօն գտնելու, այլ գիտական կրթութիւն ստանալու համար, կարող է բաւարարութիւն ստանալ և լուրջ գիտական պաշարով ժողովրդի մէջ ելնել՝ նրան օգնելու և նրա համար գործելու անհուն տենչանքով։ Համալսարանն ոչ ոքի իրաւունքներ չէ տալիս, ոչ ոքից քննութիւն չէ պահանջում, սակայն ցանկացողները կարող են քննվել և դիպլօմ ստանալ։

Մեր ճեմարանաւարտներին և դպրոցաւարտներին բուռն կերպով խորհուրդ ենք տալիս փոխանակ երկար տարիներ տանջվելու հասունութեան վկայական ստանալու համար՝ գալ մտնել և 2 կամ 3 տարվայ ընթացքում աւարտել իրանց ուսումը. նրանք, որոնք միջոցներից զուրկ են, 1—2 տարվայ ուսուցչութիւնից յետոյ կարող են գալ, լրացնել իրանց թերին և դառնալ նորից ժողովրդի մէջ գործելու աւելի մեծ ու լուրջ պատրաստութեամբ. մանաւանդ որ Կովկասում ևս վաղ թէ ուշ զինամօլը կը մտցվի և մանագիտական ուսումն ստացած անհատների մեծ պահանջ կը զգացվի։ Պետական նոր օրինագծով ընտրովի հաշտարար դատաւորների ինստիտուտը մտցվելու է նաև Կովկասում, իսկ այս դէպքում շիտակ, գաղափարական, ժողովրդին նուիրված և իրաւաբանական կրթութիւն ստացած անհատները, ծանօթ լինելով նաև տեղական լեզուներին և սովորութիւններին (ադաթներին), շատ հեշտութեամբ կարող են ժողովրդի վստահութեան քուէն վաստակել և դատաւորի բարձր պաշտօնի համար ընտրվել։

Իսկ այս տարվայ բացառիկ դասախօսութիւնները (տեղական ինքնավարութեան և կօօպերացիայի մասին) լսելու նպատակով՝ ցանկալի էր, որ մեր գաւառական քաղաքների ինքնավարութիւնները, Բագուի Կուլտուրական Միութիւնը և Կովկասի Հայոց Բարեգործ. Ընկերութիւնը՝ մարդիկ ուղարկէին Մօսկվա միայն 3 ամիս ժամանակով, որոնք միաժամանակ այնտեղ կուսումնասիրէին ժողովրդական կրթութեան, առողջապահութեան, ջրանցքների, դաշտերի ոռոգման, սպանդանոցի, սառցարանների, ջրերի, տրամվայի, լուսաւորութեան և այլն գործերը։

Շանեավսկիի անուան համալսարանը կարճ ժամանակամիջոցում գրաւել է ռուս հասարակութեան ուշադրութիւնը և համակրանքը։ Մօսկվայի քաղաքային ինքնավարութիւնը համալսարանի ապագայ շէնքի համար մի քանի դեսեատին տեղ նուիրեց, տիկ. Մօրօզովայից հէնց հիմնադրութեան սկզբում նուէր ստացվեց այդ նպատակով 50 հազար ր., մի անյայտ անձից՝ 10 հազար ր., իսկ նորերս մի ուրիշը, որ կամեցել է նոյնպէս անյայտ մնալ, նուիրում է գիտութեան այս նորաբողբոջ տաճարին 225 հազար ռուբլի, ցանկութիւն յայտնելով որ հոգաարձութիւնը կարճ ժամանակամիջոցում հոգայ սեփական շինութեան մասին. միայն նուիրողը իրան է վերապահել յատակագծի հաստատութիւնը։ Բացի սրանից, 2 տարվայ ընթացքում ճոխացաւ համալսարանի մատենադարանը. ռուս աւ.-ք. Ամֆիտեատրովի մահից յետոյ նրա 10 հազար գրքից բաղկացած գրադարանը անցաւ Շանեավսկիի համալսարանին. հանգ. պրոֆ. Զուպրովի ամբողջ մնտեսագիտական գրադարանը դարձեալ մնաց նրան. յայտնի գործիչ և գիտնական Եակուշկինն իր մատենադարանը՝ 10 հազար անուն գիրք, որ կազմել է երեք սերունդ—նշանաւոր դեկաբրիստ Եակուշկինը, նրա որդին և թոռը—դարձեալ մնում է նրան. վերջերս պրոֆ. Բոտոը, նաև ուրիշ մի քանի հասարակական գործիչներ իրանց գրքերը նուիրեցին այս համալսարանին. այնպէս որ այժմ նրա մատենադարանը բաղկացած է մօտ 35 հազար հատոր գրքից։

Ահա, ընթերցող, ձեզ ռուսական կեանքի պատկերը, չը նայելով որ ժողովրդական մասսան այժմ խոր քնէածութեան շրջանումն է, չը նայելով որ ըսկզբան ամեն մի գիտակցական և հասարակական շարժում կամենում է իր որբանում խեղդած լինել, այնուամենայնիւ ռուսական կեանքի մէջ մի հսկայական շարժում է նկատվում. շարժում դէպի գիտութիւն, լուսաւորութիւն ու ինքնագիտակցութիւն. և սա շատ բնական է, քանի որ ժողովուրդն երբէք անշարժ դիակի փոխվել կարող չէ։

Առ-Զէն

ԽՕԼԵՐԱ

—

◆ Բիլլիսեն.—Օգոստ. 9-ի առ. ժամը 9-ից մինչև օգոստ. 10-ի առ. ժամը 9-ը Թիֆլիսում խալերայով հիւանդացել են 4 հոգի։ Հիւանդանոցում կային 28 հոգի, աւելացել են 4, առողջացել և դուրս են եկել 3, մեռել են 2, ներկայումս կան 27 հոգի։

◆ Օգոստոսի 9-ին խալերային նշաններով հիւանդացել և բարակներն են ուղարկվել. 1) 3-րդ Պետրովսկեան անցքում ապրող Ալէքսանդրա Սուչէնիկովան 31 տար.։ 2) Տրօիցկայա փող. № 3 տանը՝ Թիֆլիսեցի Մարիա Բերիձէն, 70 տար.։ 3) Բաքու Այվազովի աղիւսի գործարանում կարսեցի Լիւդվիկ Սիմօնովիչ Մելքոնովը, 20 տար. (բանւոր)։ 4) Աւճալեան փող. № 123 տանը՝ Նինա Պոնոմարեվան, 7 տար.։ Զինուորական հիւանդանոց է ուղարկվել խալերային նշաններով հիւանդ կօզակ Եֆիմ Մուտրակը։ Հիւանդացածների բնակարաններում ախտահանութիւն է կատարվել։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Երէկ առաւօտեան գնացքով Կ. Պօլսից Թիֆլիս ժամանեցին բժիշկներ՝ Ահմէդ Իհսան-բէյ, Ալի Մէհմուհ-բէյ, Սաւվրի Գաւրիլ էֆէնդի, Մէհմէդ Շէֆիկ-բէյ և Հիւսէին Աթիֆ-բէյ, որոնք օսմանեան կառավարութեան հրահանգով գնում են Վան, խալերայի դէմ միջոցներ ձեռնարկելու և նախազգուշական պատրաստութիւններ տեսնելու համար։ Բժիշկները առաջնորդութեամբ մեր աշխատակից Յար. Գասպարեանի, որին խնդրել էր առաջնորդել բժիշկներին Թիֆլիսի օսմանեան հիւպատոս Զաֆէր-բէյը, նախ այցելեցին Մուխրանեան բուժարանը, ուր բժիշկ Կ. Ստեփանեանը ամենայն սիրալիրութեամբ հիւրե-

ին ծանօթացրեց բուժարանի կարգ ու սարքի հետ ամենայն մանրամասնութեամբ, որին յայտնելով իրանց խորին շնորհակալութիւնը՝ բժիշկները գնացին Արամեանի անուան հիւանդանոցը դիտելու, ուր նրանց բացատրութիւններ էր տալիս բժ. Իգիթեանը։ Ծանօթանալով հիւանդանոցի հետ, բժիշկները յայտնեցին իրանց գոհունակութիւնը հիւանդանոցի նկատմամբ և հրաժեշտ տուին բժ. Իգիթեանին, յայտնելով նրան խորին շնորհակալութիւն սիրալիր բացատրութիւնների համար։ Նոյն օրն և եթ թիւրք բժիշկները մեկնեցին դէպի Վան, գոհ տպաւորութեան տակ, որ նրանց վրա թողեցին մեր քաղաքի հաստատութիւնները։

◆ Թիֆլիսում գտնվող պաշտօնաթող զինուորական բժիշկներից ոչ ոք, կովկասեան շրջանային բժշկական տեսչի ասելով, չէ համաձայնվել իրանց առաջարկված պայմաններով Թերեքի շրջանը գնալ խօլերային համաճարակի դէմ կռուելու համար։

◆ Քաղաքային բոլոր հինգ բուժարաններում յուլիս ամսվայ մէջ այցելել են 5224 հիւանդներ, որոնք այցելել են 12,104 անգամ։ Աժենից շատ յաճախորդներ ունեցել է քաղաքային կենտրոնական հիւանդանոցը, ուր այցելել են 2662 հոգի՝ 6586 անգամ, այնուհետև Հալաբարի ու Կուկիայի բաժանմունքները։

◆ Որովհետև սեպտեմբերի 1-ից վերսկսվում են քաղաքային դումայի նիստերը, ուստի քաղաքային վարչութեան բաժանմունքները շտապով կազմում են և տպագրութեան յանձնում կարևոր զեկուցումները դումայի ձայնաւորներին ուղարկելու համար։ Այդ զեկուցումների թւում քաղաքային դումայի քննութեան պէտք է առաջարկվեն, ի միջի այլոց, քաղաքային ծնընդաբերական ապաստարանի շէնքի, Ծալկայի ջրանցքի կառուցման ու քաղաքային բարձրագոյն դպրոց բանալու վերաբերեալ հարցերը։

◆ Անցեալ յուլիս ամսվայ ընթացքում Բագուում ստացված է ընդամենը 43,943,354 պուդ նաւթ, որից 11,884,345 պուդը Բիբի-Հէյբաթում, 32,059,009 պուդը Սաբունչի-Բալախանի-Բօմանիում։ Բացի դրանից Սուրախանիում նոյն ժամանակաժիջոցում ստացված է ֆոնտանի նաւթ 417,000 պուդ, քաշելով՝ 29,860 պուդ (սև նաւթ՝ 21,950 պուդ, սպիտակ՝ 7910 պուդ)։

◆ Գաւառներից արդէն սկսվել են դիմումներ Ներսիսեան դպրոց՝ նորեկ աշակերտների ընդունելութեան համար։ Բայց ուսումնարանի վարչութիւնը ոչ խնդիրներ է ընդունում և ոչ էլ որևէ յայտարարութիւն տալիս այդ մասին։

◆ Մուխրանեան նորակառոյց կամուրջը մայթելու աշխատանքների հետ միաժամանակ սկսել են անցկացնել նաև էլեքտրաքարշի երկաթգծերը։

◆ Գիւղատնտես Ա. Սահակեանը առաջիկայ աշնանից, կառավարութեան կարգադրութեամբ, գնալու է Պետերբուրգ գիտական պարապմունքներ կատարելու գիտութիւնների ճեմարանում և երկրագործական մինիստրութեան բիւրոյում։ Այստեղ, ի միջի այլոց, ուսումնասիրելու են Սահակեանի գտած պարպտիների տեսակները։

◆ Ինչպէս լսում ենք, սեպտեմբերի 19-ին Օդեսսայում բացվելու է գեղարուեստական ցուցահանդէս։ Մասնակցելու համար հրաւէր է ստացել նկարիչ Գ. Բաշինջաղեան, որը ցուցահանդէսի համար մօտ օրերս ուղարկում է երկու փոքրիկ նկար՝ 1) «Կաղբէկի տեսարանը Թիֆլիսի կողմից» և 2) Բօրժոմի տեսարաններից՝ «Լուսնեակ գիշերը»։ Նկարները պէտք է ներկայացված լինեն այնտեղ սեպտեմբերի 1-ին։

◆ Վերջին ժամանակներս լուր էր տարածված, որ ժողովրդական լուսաւորութեան մինիստրը թողնում է իր պաշտօնը։ Մայրաքաղաքի թերթերի ասելով, այդ տարածված լուրը այժմ չէ ճշդվում. նա աւելի է ամրապնդել իր տեղը։

◆ Մայիս 10-ին, սանիտարական բժիշկ Զաբլուդովսկին և սանիտարական վերահսկիչ Գ. Տէր-Յովհաննիսեանը, 6-րդ քաղաքամասում, Կախէտինսկայա փողոցի վրա, Կիրշբաումի տանը երեսն հանեցին մօտ 700 պուդ «Տարան» տեսակի փչացած ձուկ, որը և ոչնչացրին։

◆ Անցեալ յուլիս ամսում քաղաքային առաջին ապաստարանում գիշերել են 118 հոգի, որոնցից մէկը եղել է կին։ Ըստ ազգութեան հետևեալն են. ռուսներ՝ 45 հոգի, հայեր՝ 43 տղամարդ և 1 կին, վրացիներ՝ 25 տղամարդ, գերմանացիներ՝ 1 տղամարդ, ասորի՝ 1 տղ. և լեզգի՝ 1 տղ.։

◆ Պետերբուրգի Հնո. Գործակալութիւնը յայտնում է, որ Պետերբուրգի սանիտարական բժիշկների խորհրդակցութիւնը որոշել է միջոցներ ձեռք առնել, որ Օդեսսայից այնտեղ հասնող հացահատիկների բեռների միջոցով ժանտախտը մուտք չը գործէ Պետերբուրգ։

◆ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան մէջ, «Ут. Р.» լրագրի ասելով, միտք է յղացել ձմեռը միօրեայ ցուցակագրութիւն նշանակել բոլոր տարբերակի դպրոցների և զանազան տեսչութիւնների ուսումնարանների համար։

◆ Մօտ ժամանակներս, «Н. В.» լրագրի ասելով, յանկարծամահ անող խօլերայից գնացքի վագոնում մեռաւ «Русское Чтеніе» թերթի խմբագրի օգնական Ս. Սերգիէվսկին, որ Պետերբուրգից գնում էր Կովկաս՝ բժշկվելու նպատակով։ Եկատերինոդարից մի քանի ժամ հեռու նա ցաւեր է զգում ստամոքսում, որից յետոյ սկսվում են գալարումները, և նրան հասցնում են Եկատերինոդար բոլորովին մեռած։

◆ Բօրժոմից հաղորդում են մեզ, որ խօլերայի այցելութիւնից յետոյ՝ այնտեղ յայտնվել է տիֆի համաճարակը։ Բաւականին թւով հիւանդացողներ կան։

◆ Սուխումի քաղաքային դումայի ձայնաւորներից մէկը, պրոֆ. Լէվշին, իր անձնական գործերով Մոսկվա գնալով, նեղութիւն է յանձն առել աշխատելու՝ Սուխում քաղաքի փոխառութեան գործը գլուխ բերելու համար։

◆ Երևանի նահանգի Զանգեզուր կամ Ցղնա գիւղում (Օրդուբաթի գաւառ), պօստային բաժանմունքին կից, օգոստոսի 1-ից, բացվել է պօստ-հեռագրական խնայողական գանձարկղ։

◆ Երևանի գաւառի Գէղաքլու գիւղում, «Кавк.» լրագրի ստացած տեղեկութեան համաձայն, յուլիսի 26-ին, երեկոյեան ժամը 6-ին Մարոս Ազատեանի այգին են մտնում տեղացի Յարութիւն Բաղալեանը, 18 տարեկան, և Միքայէլ Գրիգորեանը, 19 տարեկան, և սկսում պտուղներ քաղել։ Այդ միջոցին այգումն են լինում նաև այգեփորոջ աղջիկները—Աբուսը՝ 11 տարեկան և Գալիզան՝ 8 տարեկան, որոնք արգելք եղան պտուղները գողանալու։ Այդ առիթով վէճ է ծագում գողութեան եկածների ու պաշտպանների միջև, որի ժամանակ Բաղալեանն ու Գրիգորեանը յարձակվում են աղջիկների վրա և դանակի մի քանի հարուածով սպանում են երկուսին էլ տեղն ու տեղը։

◆ Բօրիում ապրում էր Ստեփան Մէրաբաշվիլի անունով տարիքաւոր մի մարդ, որի կինը, համարեա, բացարձակ կերպով պահում էր իրան սիրեկան Կ. Բաքրաձէին։ Աժուանուց ազատվելու համար, կինը դըրդում է Բաքրաձէին խեղդել ամուսնուն և ապա անշնչացած մարմինը դնել երկաթուղային գծի վրա, որպէս զի անցնող գնացքը նրան մէջից կէս անէր ու աւէին, որ ինքն է գնացքի տակ ձգել իրան։ Կ. Բաքրաձէն, իր ծանօթներ Անտոն Խիզանովի, Վանո և Վասո Բաքրաձէների և Սօֆիա Ջաւախօվայի հետ միասին յուլիսի 26-ին մանում են այն պարտէզը, ուր պահապան էր Մէրաբաշվիլին, և գտնելով վերջինիս քնած՝ խեղդաւահ են անում և ապա դիակը քաշում գնում երկաթուղագծի ըէլսի վրա, իսկ իրանք հեռանում, ենթադրելով որ իրանց ծրագիրները ապարդիւն չը պէտք է անցնեն։ Դիշերվայ ժամը 3-ի մօտերը անցնող գնացքի մեքենավարը նկատում է ընկած դիակը և կանգնեցնում գնացքը։ Բիչ ժամանակից յետոյ ոճիրը երևան է գալիս իր բոլոր մանրամասնութիւններով։

ԱՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

◆ Օգոստոսի 5-ին, երեկոյեան մօտ ժամը 10-ին, Կօչուբէեվսկայա փողոցի № 20 տան մօտ, երեք դեռահասներ, որոնք են՝ Արտաշես Օսիպով, 14 տարեկան, Թիֆլիսեցի Վասիլիյ Զուբիէվ, նոյն տարիքով, և երեւանցի Կոստանդին Ակօպով, սկսեցին վիճել իրար հետ, որը շուտով անցաւ ծեծի, որի ժամանակ սկզբի երկու հոգին բարձրացնելով Ակօպովին այնպիսի ուժով զարկեցին գետնին, որ վերջինս ՇՅասուածքներ ստանալով գլխի վրա՝ գիտակցութիւնը կորցրեց։ Նրան իսկոյն Միքայէլեան հիւանդանոց փոխադրեցին, իսկ Օսիպովին և Զուբիէվին ոստիկանութիւնը ձերբակալեց։

◆ Օգոստոսի 9-ին, երեկոյեան ժամը 7-ին, Սամանայա հրապարակի վրա, մի շուն կծեց Թիֆլիսեցի Գերասիմ Եսագովին, 9 տարեկան։ Շանը սպանեց մօտիկ կանգնած քաղաքապահը։ Երեխային բժշկական օգնութիւն հասցրին։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՕՆԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Հայ Դերասանների Ընկերակցութիւնը ժամադիր է առաջիկայ սեպտեմբերում Վրաց թատրոնում յաջորդաբար կազմակերպել ներկայացումներ։

Բէնէֆիսները բաղկացած կը լինի յատկապէս ֆարսերից և կոմէդիաներից։

◆ Վրաց Դրամատիկական Ընկերակցութիւնը Թիֆլիսում կը հիմնի դրամատիկ դասընթացքներ, որի համար էլ նա դիմել է թոյլատրութիւն խնդրելու պատշաւաւոր իշխանութիւնից։

Դասընթացքը բաղկացած կը լինի 3 մասից. 1) պարտադիր, 2) ոչ-պարտադիր և 3) մէջ ընդ մէջ։ Առաջինում մտնում են դիրքային (արտասանութիւն), միմիկան, պարը, ձայնի մշակումը, գրիմը և դեկլամացիան. երկրորդում՝ դրամայի և գրականութեան մասնակի պատմութիւնը ընդհանրապէս, երաժշտութիւնը (նուագածութիւն որևէ գործիքի վրա և երգ) և երրորդում՝ պլաստիկայի թէօրիան և բեմական արուեստի ժամանակակից ուղղութիւնը։ Այս դասընթացքների ղեկավարութիւնը կը յանձնվի անուանի դերասան Վլ. Աղեքսիմէսխիևին։

◆ Առաջիկայ սեպտեմբում Վրաց Դրամատիկական Ընկերութեան վարչութիւնը ներկայացումներին ժամանակցելու համար հրաւիրում է Վրաց Թիլարմոնիական Ընկ. երգիչ խումբը։

◆ Արտիստական Ընկ. ամարային թատրոնում մօտ ապագայում կը կազմակերպվի հայ-վրացերէն ներկայացում։

◆ Արքունական թատրոնը գարնանային 2 ամիսների համար վերցրել է խէրսօնցի դերասան Ն. Լէբեդէվը։

◆ Կիրակի, ամսոյս 8-ին, Վրաց Դրամ. Ընկ. կենտրոնավայրում տեղի ունեցաւ վրաց պատմութեան և առհասարակ գրականութեան հետ ծանօթ անձանց մի ժողով, որը պիտի քննի և իր վերջնական խօսքն ասի պատմական պիէսների դեկորացիաների, հագուստների, սարք ու կարգի և կահ-կարասիքի օրինակների մասին։

◆ Առաջիկայ աշնանը լրանում է Թուրքաց թատրոնի գոյութեան 36-ամեակը, որի տարեդարձը կը տօնվի Բագում «Նիջաթ» Ընկ. վարչութեան նախաձեռնութեամբ։ Իսկ միւս տարի լրանում է Թուրքաց թատրոնի հիմնադրի ծննդեան 100-ամեակը, իսկ 25 տարին նրա՝ Միրզա Ֆաթալի Ախունդովի մահվան օրից։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ուղարկում եմ պօստով, վերադիր վճ. և առանց կանխավճարի «Տրիումֆ» շէվիօտի մի ամրողջ կտոր 4¼ արշ., տղամարդկանց

ԶԳԵՍՏԻ ՀԱՄԱՐ 2 Ր. 75 Կ.

Շը նայած որ շատ էժան է, «ՏՐԻՈՒՄՖ» կտորը բրդից է (ոչ բամբակից) և ունի բոլոր լաւ կտորների յատկութիւնը—միանգամայն ամուր է, գործնական և չքեղ։ Գոյները՝ սև, մուգ-կապոյտ, շագանակագոյն, ձիթագոյն։ Ճանապարհածախքը 55 կ.։ Նոյնպէս ուղարկում եմ պատրաստի, կարված, միանգամայն գործնական և գեղեցիկ ԳԻՏԱԿ 2 բուրլով տարվայ ամին սէզօնին մատչելի։ Ճանապ. 55 կ.։ 2 բուրլով ՁՈՒՆԱՐ ուղարկում եմ պատրաստ, ամուր և գործնական կտորից կարված։ Ճանապարհածախքը 35 կ.։ Երկու և աւելի զոյգ կտոր բերել տալուց ճանապարհածախքը իմ հաշվին։ Պահանջները հասցէագրել։
Գ. Лодзь, № 70, фабрика ЗИГМУНТА РОЗЕНТАЛЯ.
Թղթակցութիւնները ռուսերէն։

(ա. օ.) (В. 50155) 870. 17—8

Երեւանի ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ բարձր դասարանների համար հարկաւոր է

Մի լեզուագէտ-վանդագէտ

ՈՒՍՈՒՑԻՉ

ռուսաց լեզուի, ռուսաց գրականութեան և ռուսաց պատմութեան համար շաբաթական 24 դասով և 70 ր. դասագնով։ Ցանկացողները իրանց խնդրագրերի հետ պէտք է ներկայացնեն ուսման իսկական վկայագրերը կամ նրանց վաւերացված պատճէնները։

Խնդրագրերը պէտք է ուղարկել մինչև օգոստոսի 20-ը Երևան՝ Հոգաբարձութեան հասցէով։

(ա. օ.) 899. 10—7

2 ԶԳԵՍՏ 5 Ր. 25 Կ.

Տարածման նպատակով՝ մենք ուղարկում ենք 12 ր. փոխարէն 5 ր. 25 կոպէկով հետևեալ զգեստացու 2 կտորները. 1) 4¼ արշ. ֆրանս. տրիկո տղամ. զգեստի համար, շատ ամուր, գործնական և մոդային նկարներով բրդէ կտոր։ 2) 8 արշ. կտոր «Անգլէյ», կանանց ամբողջ զգեստի համար, միանգամայն մոդային և գեղեցիկ բրդէ կտոր։ Այդպիսի 2 կտոր լաւ տեսակից՝ ուղարկում ենք 5 ր. 75 կ.-ով։ Ճանապարհածախքը 55 կ.։ Երկու և աւելի զոյգ կտոր բերել տալուց ճանապարհածախքը մեր հաշվին։ Ուղարկում ենք պօստով, վերադիր վճ., առանց կանխավճ. և երաշխաւոր., եթէ չը հաւանվի՝ յետ ենք վերցնում։ Պահանջները հասցէագրել. г. Лодзь, № 70, въ фабрику ЗИГМУНТА РОЗЕНТАЛЯ.
Թղթակցութիւնները ռուսերէն։

(ա. օ.) (В. 50257) 871. 17—8

Լոյս տեսաւ եւ վաճառվում է
ԱՐՇ. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆԻ

ԽԱՒԻԱՐ ԱՇԽԱՐՀՈՒՄ

պատմուածքներ գիւղական կեանքից

307 էջ, գինն է 1 բուբլի

Այս պատմուածքներից մի քանիսը, օրինակ՝ «Վարոսի յաճախորդները», «Կարմիր ճիպոտը», «Սէրոբենց ածերը» և այլն, տըպագրված են եղել «Մուրճում» 1901—1902 թ. թ., իսկ միւսները հեղինակի անտիպ աշխատութիւններից են։

Գումարով գնողներին 20% զեղչ։

Դիմել հեղինակին՝ Батумъ, Государствен. Банкъ. Инспектору мелкаго кредита, А. Шахназаряну.

(չ. ու.) 896. 5—3

2 ԶԳԵՍՏԱՅՈՒ 4 ՐՈՒԲԼՈՎ

Տղամարդկանց հագուստեղէնի շրջանում նորութիւն է «Ճէվիօտ Տուրինը»։ Այնպիսի էժան գնով՝ ինչպէս 2 բուբ., 4¼ արշ. կտորը, տղամ. ամբողջ զգեստացու, ոչնչով չէ տարբերվում արշ. 2—3 բուբ. արժեցող կտորից և ունի վերջինիս բոլոր յատկութիւնները, այն է՝ բարձր տես. ամրութիւն, գործնականութիւն և էլեգանտութիւն։ Գոյները՝ սև, մուգ-կապոյտ, շագանակագոյն, ձիթագոյն։ Այդպիսի 2 կտորը ուղարկվում է 4 բուբլով, ճանապարհածախքը՝ 70 կ., պօստով, վերադիր վճ., առանց կանխավճ.։ Ձորս և աւելի կտոր բերել տալուց՝ ճանապարհածախքը ֆաբրիկայի հաշվին։ Առանց բրնկի, լրիւ երաշխաւոր., եթէ չը հաւանվի՝ յետ ենք վերցնում։ Պահանջները հասցէագրել. въ фабрику шерстяныхъ издѣлій Т-ВА «ЭХО». г. Лодзь, № 70.
Թղթակցութիւններ ռուսերէն։

(ա. օ.) (В. 50359) 872. 17—8

ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԻ

„ԱՐՕՐ“

Ամսագրի № 6—7 (յունիս-յուլիս) միացեալ համարը հետևեալ բովանդակութեամբ.

1) Կարա-օղլու (վէպ հայ ասպ. կեանքէն) Զ. Բ. Բրջինի, թարգմ. Մինաս Ցոլակ
2) Քեթի խանում (վէպ Պարսկա-Քիւրդստանի հայերի կեանքից) Խուրշիդ
3) Տանջվածը (յեղափոխական կեանքից) Շահրիար
4) Հանելուկը (առակ) Նամալեան
5) Կոչ (բանաստեղծութիւն), Ս. Ֆրուգի թարգմ. Կոստ. Կրասիլնիկեան
6) Հայ եկեղեց. պեսակ. յարաբերութիւնները Հին-Հայաստանում Ա. Սամուէլեան
7) Կասկածը (Պալեստինի լեգենդա), Վ. Դօրօշեվիչի թարգմ. Կոստ. Կրասիլնիկեան
8) Օսմ. հայերի ազգ. սահմանադրութիւնը Սարուխան
9) Իմ յուշատետրը, Լէօնիդ Անդրէէվի թարգմ. Ա. Փորքշէեան
10) Հանրամատչելի զրոյցներ, Հ. Հէլմհոլցի թարգմ. Ց. Զախմախսազեան
11) Պրիսաւը Սաք-Ման
12) Նա ազաս է, Ալէքսէյ Սպասսկիի թարգմ. Լ. Դանիէլեան
13) Նկարչի յիշողութիւններից, Կազմիր Տէտայէրից թարգմ. Վիկտոր Մանուէլեան
14) Pax. Խաղաղասիրական շարժումն երկրագնդի վրա Հ. Առաքելեան
15) Ֆուտպ փաղայի բարոմետրական կետերը
16) Հայկական կեանք
17) Ռուսական կեանք Կալխաս
18) Արտասահմանեան կեանք Ս. Ն.
19) Գիտական, գրական եւ բաներական բովանդակ.
20) Ցանկալուած. Իննսուն երեքը, մեծ վէպ Վ. Հիւգոյի, թարգմ. Հ. Սաֆարեան
21) Ցայտարարութիւններ 929. 0—1

„Գուտենբերգ“ գրախանութի հրատարակած դասագրքերը.

«Պատմութիւն Հայոց», Պալասանեանի 1 ր. 50 կ.
«Քերականութիւն», Պալասանեանի, 3 մասերը միասին 75 կ.
«Ընդհանուր պատմութիւն», Հին-Դար, Վինոգրադովի } թարգմ. Նոր-Դարի մասերի 1 ր. —
» » Միջին-Դար, » 1 ր. —
» » Նոր-Դար, » 1 ր. —
«Գծագրութիւն», Գ. Լեոնեանի, Ա. մաս, 20 կ., Բ. մաս, 20 կ., Գ. մաս, 35 կ.։
«Գծագրութիւն և նկարչութիւն», Գ. Լեոնեանի, Ա. մաս, 20 կ., Բ. մաս, 35 կ.։
«Դաս. ընդհ. աշխարհագրութեան», մասն Ա. Բնական մաս, 85 նկարով } Դարձեալ նոր-բարեփոխված 60 կ.
» » » մասն Բ. Քաղաքական մաս 65 կ.
» » » մասն Գ. Երկրագր 50 կ.
«Ժողովրդական դպրոցի մեթոդիկան, Թ. Յ. Տէր-Միրզաբեանի», 1 ր. 50 կ.
«Հայկական վայելչագրութիւն», Գ. Լեոնեանի, մասն Ա. Բ. Գ., իւրաքանչ. մասը 40 կ.
«Հայոց եկեղեց. ծխակ. դպրոց. ծրագիրը», Ս. Տիգրանեանի 40 կ.
«Գործնական կաթնատնտեսութիւն», Թ. Ա. Մխիթարեանի 50 կ.
«Գրաբարի հոլովում», Ս. Մալխասեանի 25 կ.
Մովսէս Խորենացի՝ «Պատմութիւն հայոց» 1 ր. —
«Հայ գրողներ», մասն Ա. և Բ., կազմեցին Ահարոնեան, Աղայեան, Թումանեան և Փափազեան 2 ր. —
«Դասընկեր» Ռաշմաճեանի և Զիլինգարեանի, մասն Ա 50 կ.
» » » մասն Բ. 60 կ.
«Իրազնական դասեր», Ս. Մանդինեանի 1 ր. — կ.
«Մանկական պարտէզ», Արղութեանի 3 ր. —
«Հայերէն գրագիտութիւն ուսուցանելու բանաւոր նախապատրաստութեան մասին ուսուցիչների համար», Ղ. Աղայեանի 10 կ.
Շուտով լոյս կը տեսնէ «Պատմութիւն հայոց գրականութեան»
երկու հատորը միասին, Վ. Փափազեանի, 1 ր. 50 կ.
Դիմել՝ Тифлисъ. Книжный магазинъ „Гуттенбергъ“. Г. И. Галустяну.
(չ. շ. ե.) 928. 3—1

Լոյս են տեսել և վաճառվում են
ՆԻԿ. ՍԱՐԳՍԵԱՆԻ
կենսաբանական ուղղութեամբ կազմված
ԳԱՏԿԵՐԱԶԱՐԴ
ԲՆԱԿԱՆ ՊՈՏՄՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ
ՄԱՐԴ և ԿԵՆԴԱՆԻ (տարրական մարդկազմ. և կենդանաբանութիւն) 204 երես, 70 կոպ.
ԲՈՅՍ (տարրական բուսաբանութիւն) 128 երես 50 կոպ.
Դիմել՝ Թիֆլիս, «Գուտտենբերգ», «Կենտրոնական», «Գիր» և «Փարոս» գրավաճառոնցները կամ կազմողին հետևեալ հասցէով՝ Коцубеевскій переулокъ, 13.
Վաճառվում են նաեւ
Վիլհելմ Բեյշլեգ.—«ՄԱՐԴՈՒ ԾԱԳՈՒՄԸ», գերմ. թարգմ. Նիկ. Սարգսեան, գինը 40 կոպ.
Նիկ. Սարգսեան.—«ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԳՈՅՆԵՐԸ» գինը 15 կոպ.
(օ. ս.) 889. 10—5

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲ. ՄԻՆԻՍՏՐ. ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՎՈՂ
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միքայէլեան պր. 24/4.
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտր. կրթութիւն։
Դասընթացքն աւարտողներին տրվում են ատեստատներ։
ԳՈՐԾՆԱԿԱՆ գրամատները կատարվում են կուրսերում՝ Pitman և Պարկի Pigier դպրոցների ձևով կազմակերպված Muster-Comtori-ում։ Նիւթերն առնվում են բէյլ կեանքից։ Առարկաներն են. ա) Հաշուապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրան., ամերիկան, բանկային և գործարարական), 2) Առևտրական թուաբանութիւն, 3) Քաղաքատնտեսութիւն, 4) Օրէնքագիտութիւն (առևտրական նման), 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Թուաբանութիւն համրիչի իրաւունք, մուրճակի կանոնագրութիւն), բ) ՈՉ-ԳՈՐԾՆԱԿԱՆ.—1) ՕՏԱՐ վրա, 7) Վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենավաղ ձեռքի ուղղումն). բ) ՕՏԱՐ-ԼԵԶՈՒՆԵՐ, 2) սղագրութիւն, 3) դակտիլոգրաֆիա (բեմինգտոն և ուր.) և 4) առևտրական թղթակցութիւն օտար լեզուներով։ Գրամատները կատարվում են և գաս-գաս։ Ունկնդիրների թիվ շատութեան պատճառով բացվում է զուգընթաց բաժանմունք։ Ունկնդիրների թիվը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, առ. 10—2 ժ. և երեկ. 4—7 ժ.։ Ծրագիրը և կանոնները ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքում։
Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութեան կանդիդատ՝ Տ. ՓԻԼՕՅԵԱՆ
(ու. կ. չ.) 907. 0—3

Լոյս են տեսել եւ վաճառվում են
ԱՐՏԱՇԵՍ ԱԲԵՂԵԱՆԻ
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ
(փոխադրած ըստ Իվանովի և Կրուբերի)
ԲԱԶՄԱԹԻՒ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ։
Մասն Ա.—Բնական աշխարհագրութիւն. Կովկաս և սահմանակից երկիրներ։ 4-րդ և ժասամբ 3 դրդ տարվայ դասընթաց (նոր ծրագրով—հայրենագիտութիւն) 1909 թ., 2-րդ տպ., գինն է 60 կոպ.։
Մասն Բ.—Ասիա, Աֆրիկա, Ամերիկա և Աւստրալիա։ 5-րդ տարվայ դասընթաց։ 1910 թ., 2 դրդ (նոր) տպ., գինն է 65 կոպ.։
Մասն Գ.—Եւրոպա։ 6-րդ տարվայ դասընթաց (ամբողջ տակ է և լոյս կը տեսնի մինչև օգոստ. 25-ը)։ Գինը՝ մօտ 65 կոպ. (բազմաթիւ պատկերներով)։
Պահեստը՝ «ԳԻՐ» դրավաճառանոց (Тифлисъ, Вельяминовская, 7).
(չ. շ.) 915. 6—2

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ
БАКУ, уголъ Красноводск. и Меркурьевск., телеф. № 10—56.
Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական և առևտրական կրթութիւն և պատրաստել հմուտ հաշվապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։
Կուրսերում ուսանվում են՝ 1) Առևտրական թուաբանութիւն և թուաբանութիւն համրիչի վրա. 2) Հաշվապահութիւն արդիւնաբերական, գործարանական, առևտրական և բանկային. 3) Առևտրական թղթակցութիւն. 4) Առևտրական տնտեսագիտութիւն. 5) Առևտրական և մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն. 7) Ուսուցումն զրոյ մեքենայի մոտ։ Ցանկացողների համար՝ առանձին վճարով լեզուներ և ատեստագրութիւն։
Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 20-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից՝ ամենայն օր կուրսերում, առաւօտեան ժամը 9—12-ը և երեկոյեան 4—7-ը։
Ուսումնական դասընթացքը (ստաժը) և ժամանման ծրագիրը (программа) տրվում և ուղարկվում են ՁՐԻԱՒԱՐ։ Ցանկացողները դիմում են՝ Баку, учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову. (չ.կ.) 884. 20—4

Типогр. въ „Экономія“ Большая Ванская № 3.